

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ «ՅԱՅԱՍՏԱՆԻ ՊՈՆՁԻԱ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ.
ՔՆՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի արյունալի թոհուբոհի տարիներին Հայաստանի, հայ ժողովրդի, նրա մշակույթի հանդեպ ոռուս հասարակայնության աճող հետաքրքրության արտահայտություններից ու վկայություններից մեկը 1916 թ. ամռանը Մոսկվայում հրատարակված «Հայաստանի պոեզիա» ժողովածուն է: Ինչպես և արձանագրված է ժողովածուի էջերում, դրա ստեղծման նախաձեռնությունը պատկանում է Մոսկվայի հայկական կոմիտեին: Եվ եթե կոմիտեի ներսում հրատարակչականֆինանսական մեծ ծախսերը հոգացել են մեծահարուստ հայեր, պակաս ծանրություն չէր վիճակված հրատարակության պատրաստողներին: Ասել կուզի՝ եթե Վ. Բրյուսովի ձեռքով բազմիցս արձանագրված է, որ ինքը խմբագրել է, նաև թարգմանել, ապա ո՞վ կամ ովքե՞ր են այդ վիթխարի քանակի բանաստեղծական լավագույն նմուշներ ընտրողները՝ դասդասողկազմողները: Հայտնի է, որ հղացման օրից նախաձեռնողներ և ակտիվ մասնակիցներ են եղել դրական-մշակութային երախտավոր գործիչներ Կտրեն Միքայելյանը, Պողոս Մակինցյանը, ապա և Վահան Տերյանը (թեև խմբագրական հանձնախմբի կազմում եղել են նաև Կ. Կուսիկյանն ու Ա. Մատուրյանը)¹, որոնց եռանգուն գործունեությամբ և ստեղծվել է, ըստ էության, ժողովածուի հայերեն օրինակը: «Այդ ժողովածուի ձեռնարկությունը հայկական է և ոչ անկախ, ինքնաբեր: Մոսկվայի Հայկական Կոմիտեին և Պողոս Մակինցյանի ջանքերին ենք գլխավորապես պարտ լինելու հայ քնարերգության նմուշների ոռուսերեն լույս տեսնելը, դրանք են, որ հետաքրքրել են ոռուս բանաստեղծին (Վ. Բրյուսովին — Ան. Զ.) և թեև ավորել նրան: Հետևաբար, ինիցիատիվը հայկական է և գրական-գեղարվեստական գաղափարը մասամբ տոգորված է քաղաքական-հասարակական նպատակով, թեև ժողովածուն լինելու է զուտ գրական-գեղարվեստական, — «Հայաստանի պոեզիա» ժողովածուի հրատարակության մասին խոսելիս արձանագրել է Նիրվանզազեն:— Ավելացրեք և այն, որ Մոսկվայի ժողովածուն հրատարակվում է հայ դրամով և Հայկական Կոմիտեն է, որ վերցրել է իր վրա նրա ծախքերը: Ասել է, ձեռնարկությունը կրում է մի տեսակ

¹ Այդ մասին տե՛ս նաև՝ К. Н. Г р и г о р ь я н. В. Я. Брюсов и армянская поэзия. М., 1962, с. 19—49.

բարեգործության դրոշմ, որ սակայն մաղաչափ չի նսեմացնում նրա բարոյական արժեքը»²:

Ըստ այդմ, հասկանալի է գրքի խորագրին կից նշված «Վալերի Բրյուսովի խմբագրութեամբ», որը ժամանակի գրական-հեղինակային բարքերի գիտակ Բրյուսովը նաև նշում-չեչտում է առանձին հանձնարարականով. «I. Խմբագիրը ընթերցողներին. —II. Հրատարակութեան խնդիրները. —III. Աշխատանքի բաժանումը» համառոտակի տեղեկատվութեամբ և սույն ծանուցումով. «Ռուսերեն թարգմանությունների ընդհանուր խմբագրությունը կատարել է Վ. Յա. Բրյուսովը, որը մասնակցել է նաև թարգմանելու համար որոշված գործերի վերջնական ընտրութեան: Բացի այդ, Վ. Յա. Բրյուսովին առաջարկվել է գրել ժողովածուի ներածական ակնարկը (հայ պեգիայի պատմական ակնարկ)»³: Այս մեկ առ մեկ թվարկվում են այն մասերն ու հեղինակները, որոնք թարգմանել է անձամբ Բրյուսովը. այն է՝ ժողովրդական պոեզիա, միջնադարյան և աշուղական պոեզիա, նոր ժամանակների բանաստեղծներից էլ առանձին էջեր: Ստեղծագործություններ՝ ընտրված որոշակի ճաշակով, բայց և խորհրդապաշտական ակնհայտ հակվածութեամբ. ուշագրի հետևելու դեպքում դժվար է գգալ դրանց համարյա բոլորի շեշտված երաժշտականությունն ու գունդեղությունը՝ բնությունից քաղված խորհրդանիշներով: Եվ հետաքրքիր է, այդպիսիք են և սկսնակներից ընտրված էջերը, ինչպես Լեյլիի և Տեր-Մարտիրոսյանի դեպքերում, որ նշանակում է, թե Վ. Բրյուսովը մնում էր հավատարիմ իր դավանած սիմվոլիզմին և այն համարում է հեռանկարային: Այդ առումով էլ հովանավորում էր երիտասարդներին՝ թարգմանելով նրանց ստեղծագործություններից, ինչպես Լեյլիի այս տողերը.

... Холод и дождь, и метель на дворе,
Келья моя—здесь, над озером льдистым...
Спит кипарис, видит сон о заре:
Ветер играет ночной с кипарисом...⁴

Իբրև պատասխանատու խմբագիր, բնականաբար, անձամբ հենց ինքը՝ Բրյուսովն է ընտրել և մյուս թարգմանիչներին: Ինչպես Սերգեյ Շերվինսկուն, որին վիճակվեց Բրյուսովի կողքին թարգմանել Նահապետ Քուչակի իմաստուն ասացվածքներից, ապա և նոր ժամանակների բանաստեղծներից՝ Ռ. Պատկանյանի, Ղ. Ալիշանի, Լ. Շանթի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի գործերից ընտիր էջեր:

Իսկ ահա «Նոր պոեզիա»-ի արևելահայ-արևմտահայ ենթամասերում թարգմանիչները բազմաթիվ են: Եվ նրանցից էլ բոլորին չէ, որ հնարավոր է անդարդառնալ: Ուրեմն և առաջինը հիշենք Յուրի Վեսելովսկուն՝ հի-

² Շ ի ղ ա ն զ ա դ ե. Երկերի ժողովածու տասը հատորով. հ. 10, Երևան, 1962, էջ 542:

³ "Поэзия Армении с древнейших времен до наших дней". Ереван, 1973, с. 23.

⁴ Նույն տեղում, էջ 393: Ժողովածուում Վ. Բրյուսովի կատարած թարգմանությունների մասին տե՛ս, օրինակ, Կ. Ն. Գրիգորյան. Նշվ. աշխ., էջ 75-107:

չարժան թարգմանությունները Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» և Սմ. Շահազիզի «Երազ»-ը, նաև «Աշտարակ» ու «Լևոնի վիշտը» պոեմից հատվածներ: Դիպուկ ընտրություն թե՛ մեկի, թե՛ մյուսի թարգմանության ներկայացված շարքից. «Արաքսի արտասուքը» և «Երազ», որոնք, քնարական ժանրային ամենանուրբ երգային ցուցանիշով, դասական հաստատուն տեղ ունեն հայոց բազմազարյան գրականության պատմության էջերում:

Թարգմանիչներին շարքից նշանավորներից է Իվան Բուկինը, որ թարգմանել է Ա. Ծատուրյանի «Հոգիս մռայլ...» և Ավ. Իսահակյանի «Եվ վաղո՛ւց, վաղո՛ւց խոր քուն է մըտած...» գործերը: Կոնստանտին Բալմոնալ թարգմանել է Հովհ. Հովհաննիսյանից, Ա. Ծատուրյանից, Հ. Թումանյանից, Պ. Դուրյանից, Սիպիլից մեկական բանաստեղծություն՝ հերթականորեն. «Տեսնում եմ ահա — ազգեր են մեռնում...», «Գետակ», «Համբոց» («Վտակը ժայռից ներքև է թռչում»), «Իմ ցավը», «Խունկը»:

Նկատելիորեն մեծ է թարգմանությունների թիվը Վյաչեսլավ Իվանովի պարագայում, որ ծայր է առել Հովհ. Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը» և «Այ՛ վարդ աղջիկ, մոտ արի՛...» բանաստեղծություններից: Ապահովորդում են Թումանյանից քանակով գերակշիռ չորս բանաստեղծություն և «Անուշ» պոեմը՝ «Քնարական պոեմ VI երգով՝ նախաբանով և վերջաբանով» հանձնարարականով: Նկատենք, «Նոր պոեզիա»-ի «Ռուսահայերի պոեզիա» բաժնում Վ. Իվանովը, կարելի է ասել, երկրորդ տեղում է Բրյուսովից հետո: Նրան թարգմանական նկատելի բաժին է հասել նաև Իսահակյանի բանաստեղծություններից: Բայց, ինչպես հայտնի է, «Հայաստանի պոեզիա»-ում Իսահակյանի ստեղծագործության անգուղակյան թարգմանիչը Ալեքսանդր Բլոկն է՝ մեկը մեկից հատընտիր նմուշներով, թվով 13-ը, որոնք ժանրային առումով Բլոկը համարել և վերնագրել է «Երգեր»⁵: Հայտնի է, որ իր ժամանակին անտիպոեզիայով զբաղվող Ա. Իզմայիլովին գրած նամակում Բլոկը հավաստում է, թե՛ «... ես չգիտեմ՝ թարգմանությունը ինչպիսին է ստացվել, բայց բանաստեղծ Իսահակյանն առաջնակարգ է. թերևս, այժմ չկա այդպիսի անաղարտ ու անմիջական տաղանգ ողջ Եվրոպայում»⁶:

Վերոչարդրյալից ընդհանրական հետևությունն այն է, որ Հովհաննիսյան—Թումանյան—Իսահակյան ուղեգծով ներկայացված էջերն առանձնանում են միևնույն հատկանիշով. հայոց հնադարյան բնաշխարհիկ խորհրդանիշների, լեգենդների, ասացվածքների ... Վահագնի, Արաքսի, Վարդավառ—վարգի ... շրջագայությունը: Պարզվում է նաև, որ ժողովածուում Իսահակյանից զետեղված ստեղծագործությունները թվաքանակով կրկնակիից ավելի են մյուսներից. ներառյալ Թումանյանն ու Իսահակյանին հաջորդած Վ. Տերյանը:

Վերն ասվեց, որ Տերյանը ևս ակտիվորեն մասնակցել է ժողովածուի հրատարակմանը: Այսպես. ծանրաբեռնված Մ. Գորկու նախաձեռնությամբ հրատարակվող «Հայ գրականության ժողովածու»-ի աշխատանքներով,

⁵ Ավ. Իսահակյանից Ա. Բլոկի թարգմանությունների մասին տե՛ս К. Н. Г р и - г о р ь я н. Նշվ. աշխ., էջ 107-121:

⁶ А . Б л о к. Собр. соч. в шести томах. Т. 6, М., 1983, с. 260.

Տերյանը միաժամանակ պարտավորված էր տողացի թարգմանությունները մեծածավալ աշխատանք կատարել «Հայաստանի պոեզիա»-ի համար: Հիշենք. վերջինիս հրատարակությունը հրատարակվել էր, քիչ էին տողացի թարգմանողները (միայն 4-ը. Կ. Միքայելյան, Պ. Մակինցյան, Ա. Ծատուրյան, Կ. Կուսիկյան) և, միանգամայն հավաստի, լծակից է լինում Վ. Տերյանը: Հավանաբար, առաջին հերթին հանձն առնելով Իսահակյանին թե ստեղծագործություններից ընտրելը, թե թարգմանելը: Երևի թե Իսահակյանից թարգմանությունները նախապես (իհարկե բարեբախտաբար) արդեն պատվիրված են եղել Բլոկին, տողացին էլ վիճակվել է Մակինցյանին: Հենց այդ պատճառով էլ ստացվել է քանակով կրկնակից ավելի, քանի որ Տերյանի տողացի թարգմանություններից լրացուցիչ էջեր են տրվել Վ. Իվանովին թարգմանությունների համար:

Միաժամանակ տպավորություն այն է, որ Տերյանի գեպքում հաջող չեն ընտրված և թարգմանիչները: Ժողովածուում տեղ գտած բանաստեղծի «Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց»՝ «Наирянка» վերնագրով թարգմանությունը, շատ է հեռու բնագրից, ինչպես տոնայնությամբ, այնպես էլ բովանդակությամբ: Ակնհայտորեն գտնված չէ ուրիշը, և խաթարված է չափատողների սահուն ընթացքը: Ամեն դեպքում ուսներեն թարգմանությունում տողերի հնչեղությունը զգալիորեն անհրապույր-գանգաղասա է: Ահա այսպես.

Мне наирянка улыбулась тонкостанная,
Печальных глаз был прям и огнен верный взор,
И чист был пламень, как заря из ночи данная,
Горел и жил открытый облик девы гор...⁷

և այլն:

Կարգալով, իհարկե, Տերյանը ներքուստ վրդովված պետք է եղած լիներ: Մանավանդ որ ժողովածուում գետեղված իր թախծոտ-թավշյա, սահուն նվագայնությամբ հյուսված երգերի թվում կային անհաջող այլ թարգմանություններ ևս:

Ինչևէ. «Հայաստանի պոեզիա»-ն, անշուշտ, գրապատմական անդնազատելի երևույթ է, և ինքնին անչափ մեծ է Վ. Բրյուսովի ծառայությունը Հայ ժողովրդին արդեն իսկ ամրագրված նաև Վ. Տերյանի «Վալերի Բրյուսովին» նվիրված հայտնի բանաստեղծությամբ:

* * *

Մեծածավալ ժողովածուն, ինչ խոսք, թերի կլիներ առանց ժողովրդի պատմության և պոեզիայի զարգացման ընթացքների տեղեկատվության ու բացատրության: Ըստ այդմ, խմբագրական ինչ-ինչ նկատառումների շարագրանքին հաջորդում է «Հայաստանի պոեզիան և նրա միասնությունը գարերի ընթացքում» խորագիրը կրող Վ. Բրյուսովի պատմագրական ակնարկ-առաջաբանը⁸:

⁷ «Поэзия Армении...», с. 383.

⁸ Ակնարկը հայերեն թարգմանվել է մի շարք անգամ (տե՛ս Վ. Բրյուսով. Հայաստանի և Հայ կուլտուրայի մասին. Երևան, 1967, էջ 280): Հոդվածում

Հմտորեն շարակարգված ակնարկ, որ ծայր է առնում հայերի Հնդեվրոպական ծագումնաբանությունը. ծագումը սահմանելով Գր. ա. VIII—VII դդ. և հիմնականում Մառից քաղված փաստարկներով ու հետևություններով Բրյուսովն արձանագրում է, թե հայությունը համարվողը իր մեջ պարունակում է մաքուր արևելյան ուրարտական տարր՝ արևմտյան փոյունգյական տարրի հետ: Ապա և որոշակիորեն հաստատում. «Սա հաստատվում է հայոց լեզվի բանասիրական վերլուծությունում, հին աշխարհի պատմաբանների ցուցմունքներով, հնագիտության, ազգագրության, աշխարհագրության տվյալներով և վերջապես հայ ժողովրդական ավանդությունների վկայություններով: Ուստի և մենք իրավունք ունենք հայ ժողովուրդը, իր էությունում, դիտել որպես արևմտա-արևելյան միաժամանակ և՛ ասիական, և՛ եվրոպական»⁹:

Հարկ է նշել, որ ակնարկի ընթացքով նկատվում է սույն վերջին եզրակացության չարաշահում¹⁰, և, այդուհանդերձ, շարունակենք: Ուրեմն և Բրյուսովի սահմանումով հերթով ազդեցությունները փոխվում են. Բր. ա. VI—IV դարերում ազդեցությունը իրանիզմն է, ապա՝ ասուրա-բարելականը: Ինչպես վկայում է Ստրաբոնը՝ «պարսիկների բոլոր սրբությունները պաշտում են նաև հայերը», ըստ Քսենոֆոնի էլ՝ «Պարսկերենը ... այնքան տարածված էր Հայաստանում, որ այն գիտեին անգամ կանայք»¹¹:

Այնուհետև Բր. ա. IV-ից I երեքդարյա ընթացքներով՝ Ալեքսանդր Մակեդոնացու «բարերար» նվաճումներով զորանում է հելլենիզմը, որո-

ակնարկից կատարված մեղբերումները տվել ենք ըստ «Սովետական գրականություն և արվեստ» Հանդեսում (1944, № 10-11, էջ 64-74, № 12, էջ 63-66 և 1945, № 1-2, էջ 77-88) և Վ. Բրյուսովի սույն ժողովածուում կատարված թարգմանությունների: Ի դեպ, զբաղված թարգմանությունը շատ տեղերում կատարված է բավականին ազատ, երբեմն՝ անհաջող, կան նաև չթարգմանված նախադասություններ, հատվածներ: Դա, սակայն, այլ խոսակցության թեմա է. այստեղ միայն ասենք, որ նման դեպքերում, ըստ հարկի, տվել ենք անհրաժեշտ պարզաբանումներ:

⁹ Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 53:

¹⁰ 1916 թ. հունվարյան այցելության ընթացքում Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, էջմիածնում, հայ պոեզիայի մասին Վ. Բրյուսովի կարգացած դասախոսություններում ասիականի և եվրոպականի Արևելքի ու Արևմուտքի, Բրյուսովյան այս հայտնի սկզբունքի, տեսության արտահայտությունը, աղբյուրությունը հայ ժողովրդի պատմության և մշակույթի վրա ընդհանուրության է ենթարկվել ժամանակի մամուլում (տե՛ս «Պայքար», 17.1.1916: Զ. Ղ ու կ ա ս յ ա ն. Ռուս-հայ գրական կապերը նախառևտրացիոն շրջանում. Երևան, 1961, էջ 218: Ա ն. Զ ա ք ա ը յ ա ն. Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914-1920). Երևան, 1984, էջ 69-71 և այլն): Այդ սկզբունքն իր արտահայտությունն է գտել և «Հայաստանի պոեզիա» ժողովածուում: Փրակնադիտությունը բազմիցս անդրադարձել է դրան: Ի գեսլ, ինչպես նշել է մեծանուն գրականագետ իմ. Սարգսյանը, այդ սկզբունքը ժամանակին ընդունել է և Ս. Նազարյանը (տե՛ս իմ. Ս ա ը ք ա ը յ ա ն. Մանուկ Աբեղյանը և հայ հին գրականության պատմությունը. Երևան, 1946, էջ 32): Արևելք-Արևմուտք տեսության առումով նշենք, որ իմ. Սարգսյանը հակիրճ, ըստ խորությունից առարկելով Վ. Բրյուսովին, միաժամանակ գրել է. «Բայց մի բան անառարկելի է, մի բան աներկբա, որ իր մեծությունը երկրորդական է դարձնում վերը հիշված բոլոր վիճելի կետերը: Դա այն է, որ Բրյուսովը, մեծ ու բանիմաց վարպետի հմտությամբ, կարողացավ գտնել հայ գրականության միանգամայն ինքնուրույն ու պատվավոր տեղը համաշխարհային գրականության զարգացման ուղիներում ու դրանով անհունորեն բարձրացնել նրա նշանակությունը: ... Բրյուսովը առաջիններից է եղել, որ խորնացու հայտնի ասացվածքը հայ ժողովրդի քանակով փոքր. բայց դորժով մեծ լինելու մասին՝ «գործ» հասկացողությունը մեկնաբանել է ոչ միայն ռազմի դաշտում կատարած սխրություն, այլև ոգու ասպարեզում կատարած մեծագործության իմաստով: ... Իր սեփական արժանիքները ճանաչեցնելու մեջ է ... Բրյուսովի մեծ ծառայությունը հայ ժողովրդին» (նույն տեղում, էջ 34-35, 38):

¹¹ Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 54:

չակի արդյունքով Տիգրան Մեծի և նրա հետնորդների օրոք՝ արտահայտված նկարչութիւն մեջ, քանդակներում, ճարտարապետութիւն մեջ: Անգամ՝ «Մենք դիտենք, որ հայոց թագավորի արքունիքն էին հրավիրվում ճարտասաններ, բանաստեղծներ, գիտնականներ, արվեստագետներ, որ Հայաստանի մայրաքաղաքներում, արքունական թատրոնում ներկայացվում էին Հելլադայի մեծ ողբերգակների պիեսները, որ Տիգրան Մեծի որդին, արքայազն ... Արտավազդ Բ-ը նույնպես հունարեն դրամաներ ու բանաստեղծութիւններ էր գրում»¹²:

Սրանից հետո էլ Բրյուսովն արձանագրում է սեմական ազդեցութիւն, երբ Տիգրան Մեծն ու Արտավազդ II-ը արչավելով մինչև Հրեաստան՝ «...օգտակար համարեցին իրենց երկիրը փոխադրել որոշ քանակութեամբ հրեաներ (հայ պատմիչները հավաստում են, թե մինչև 100,000 ընտանիք)»¹³: Այնուհետև, վկայված սեմական ազդեցութեանն էլ, սկսած Քր. ա. II դարավերջից, փոխարինելու է գալիս հռոմեականացումը, երբ Հռոմեական կայսրութիւնը սկսում է իր «ծանր ձեռքի» տակ առնել ասիական բազմաթիւ պետութիւններ: Բրյուսովի շեշտադրումներով երկար ժամանակ Հայաստանը դիմակայում է հռոմեական ազդեցութեանը: Ավելին. հարաբերութիւնները նրանց միջև լինում են թշնամական: Եվ սակայն Սուլլայից սկսած տեական արչավանքներով Հայաստանը թուլանում է, և Հռոմի հետ՝ մեկ թշնամական, մեկ բարեկամական հարաբերութիւնների արգունքում՝ ներոնի ժամանակներում արդեն մշակութային առնչութիւնները բացահայտորեն զորանում են: Ուրեմն և մշտապես մշակութային ազդեցութիւններին հետամուտ Բրյուսովը հիշատակում է ճարտարապետականը՝ որպէս ապացույց մատնանշելով Գառնիի տաճարը, ապա շարունակելով արձանագրում. «Պետք է ենթադրել, որ հայերի մեջ տարածվել էր նաև լատին լեզվի ու դրականութեան իմացութիւն: Համեմայն գեպս կասկածից դուրս է, որ հայ երիտասարդները կրթութիւնն ավարտելու համար սկսել էին մեկնել Հռոմ, ինչպէս մինչ այդ գնում էին Աթենք»¹⁴: Ի լրումն ավելացնելով նաև, որ արդեն իսկ Տրդատ թագավորի օրերից էլ հնադարյան Հայաստանի սահմաններում պահպանվել են վիմական բազմաթիւ սեպագծե արձանագրութիւններ (III դ.):

Հիրավի, զարմանալի է հնադարյան Հայաստանի պատմութեան Բրյուսովի իմացութիւնը. տպավորութիւնն այն է, որ նրա խուզարկու աչքից հազիւ թե վրիպած լինի նկատելի որևէ եղելութիւն: Մանավանդ, երբ խոսքը վերաբերում է հակոտնյա կողմերի ու դրամատիկ անցքերի, որպիսիք հերթականորեն այժմ էլ Հռոմ և պարթևներ, ապա և սասանյաններ՝ քաղաքական կողմնորոշումներն ու հարաբերութիւններն են՝ հակասութիւնների թշնամական սրված առանցքով: Ըստ այդմ, ուշագրավ են ռուս ընթերցողին էականը, հետաքրքիրը մատուցելու Բրյուսովի սահուն անցումները: Այսպէս, եթե Հայաստան և պարթևներ հարաբերութեամբ «...Պարթևաստանը չէր կարող ազդել Հայաստանի վրա անմիջական իմաստով, բայց պարթևների հետ դաշնակից լինելն ու շփում ունենալը

¹² Նույն տեղում, էջ 56:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 59:

Հայերի մեջ ամրապնդում էին տրագիցիոն իրանական տարրերը: Այսպիսով, Հայաստանում, որը միաժամանակ և՛ հռոմեականանում էր, և՛ ձգտում դեպի իր իրանական դրացին, զուգահեռ զարգանում էին երկու նախասկիզբներն էլ՝ Արևմուտքի և Արևելքի»¹⁵:

Հենց այդպես էլ, Բրյուսովի տեսակետից ու քննական մեկնությունում՝ Արևելք-Արևմուտք ազդեցություններով նստվածք առ նստվածք հարստությունում հայերն իրենց կենցաղով, լեզվով, հոգևոր կյանքով թևակոխում են քրիստոնեական դարաշրջան: Արդեն իսկ Պարսկաստանի դեմ երկարատև պատերազմում կոփված հավատարիմ դաշնակցությունում հռոմի հետ, որը և Բրյուսովը լիաշունչ հաստատում է՝ գրելով. «Հայերի դաշինքը հռոմի հետ է՛լ ավելի ուժեղացավ, երբ հայոց թագավոր Տրդատ Գ Մեծը ամբողջ ժողովրդի հետ քրիստոնեություն ընդունեց (295, 299 կամ 301 թ.), և դա դարձավ հայերի պաշտոնական կրոնը: Ընդունելով քրիստոնեություն, որը խորապես մտավ ժողովրդի հոգու մեջ, հայերը վերջնականապես կապվեցին Արևմուտքի՝ Եվրոպայի քրիստոնեական աշխարհի հետ»¹⁶:

Հաստատում, բայց և շարունակում է խոսքը ազդեցությունների շուրջը. այս գեպքում էլ նախ հռոմին կից՝ փոքր ինչ թռուցիկ, անդրադառնում է սիրիական ազդեցությանը, այնուհետև՝ բյուզանդական և պարսկական ազդեցություններին: Եվ պատմական էքսկուրսների շղթայով ներկայացվում է Ահաակի ու Մաշտոցի այբուբենի դյուտը, դյուտին հաջորդած ազդային գրականության ու լեզվի զարգացումով՝ V դ., ապա և VI ու VII դդ. ավելի բուռն. հունարենի ուժեղ ազդեցությունում, թարգմանություններով հունարենից: Եվ ի լուր, ի դիտություն անիրավ աշխարհի, մարդկության խղճի՝ Բրյուսովը թվարկում է. «... Սուրբ Գրքի առաջին հայերեն թարգմանությունը կատարվեց ասորերենից... Հայերը մայրենի լեզվով թարգմանում են բազմաթիվ հունական գրքեր՝ փիլիսոփայական, աստվածաբանական, ճարտասանական, պատմական, քերականական, նաև ճշգրիտ դիտություններին վերաբերող մաթեմատիկական, աստղագիտական, բժշկական, աշխարհագրական և այլն: Հայ գրականության մեջ այս ամբողջ ժամանակահատվածը կոչվում է հելլենաբանների շրջան»¹⁷:

Ոչ այնքան ստույգ հղումներով ականարկի հեղինակն անդրադառնում է և պարսկական հարաբերություններին, և սակայն միանգամայն թռուցիկ է անդրադարձը թե՛ արաբական արշավանքներին, թե՛ ազդեցությունը: Այնուհետև հերթը հասնում է Բագրատունիների թագավորությանը՝ Անի մայրաքաղաքով ու քաղաքի հռչակավոր ճարտարապետությունում, որոնց հասցեին Բրյուսովի գնահատությունը զարմանալիորեն այսպիսին է. «Այդ երկու՝ արաբական տիրապետության և Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանների համար բնորոշ են արևելյան ասիական նախահիմքերի դերակազմությունը հայկական կյանքում և արվեստում: Ճարտարապետության մեջ VII-VIII դարերում տիրապետած բյուզանդական ձևերը հետզհետե տեղը գիջում են արաբական ճարտարապետական ո-

¹⁵ Նույն տեղում, էջ 60:

¹⁶ Նույն տեղում, էջ 61:

¹⁷ Նույն տեղում, էջ 63:

ճին... Մուսուլմանական ազդեցությունն արտահայտվում է նաև Հայ մանրանկարչության որոշ գծերի մեջ: Գրականության մեջ քայքայվում է հունարան գպրոցը... Հնարավոր է, որ արդեն այդ դարաշրջանում պոեզիայի մեջ են թափանցում պարսկական ու արաբական քնարերգության որոշ ձևեր»¹⁸:

Հենց սկզբից ասենք, որ բանաստեղծական չափ ու հանդի, ութմի, տոնայնության, քնարական շնչառության զգացողությունը օժտված, առավել ևս արաբական ու պարսկական ձևեր տարբերակելու հարցերով, թերևս, Բրյուսովն իրավացի է: Իսկ, ահա, հակառակ Արևմուտքի՝ Արևելքի մուսուլմանական «որոշ գծերի» ոճական գերակա առկայությունը Բագրատունիների ժամանակների ճարտարապետության մեջ, աշխարհիկ կառույցներից ներառյալ տաճարներ ու մանրանկարներ՝ անընդունելի է, և հիմնավորապես հերքված է գիտականորեն: Մասնավորապես, հիմնադրուկ է անցյալի (նաև մեր օրերի) այն ուսումնասիրողների կարծիքը, որոնք փորձում են Հայ ճարտարապետության հորինվածքային ձևերում տեսնել արաբական մշակույթի ազդեցությունը: Ընդհակառակը, ավելի շոշափելի ու ակնհայտ է Հայ ճարտարապետական ավանդույթների ազդեցությունը արաբ-մահմեդական միջավայրի վրա՝ պայմանավորված հիմնականում Հայ վարպետների, գործավորների, ճարտարապետների հարկադրական կամ կամավոր մասնակցությամբ Հայաստանից դուրս խալիֆայության տարածքում շինարարական աշխատանքներին. դրանք վերաբերում են հատկապես արաբ-մահմեդականների կողմից գրավված երկրներին՝ Եգիպտոսին, Իսպանիային և այլն¹⁹:

Պատկերը փոխվում է XI դ. սկզբներից, երբ դիմակայելով ծանր «հարվածներին»՝ բյուզանդական, ապա թուրք-սելջուկյան արշավանքներ, Անիի անկում (1071 թ.), այնուամենայնիվ հաջողվում է ապահովել սեփական անկախությունը: Ձևավորվում է Կիլիկյան Ռուբինյան թագավորությունը, որի օրոք արդեն, Բրյուսովի հավաստումով, «...Հայաստանին սպասում էր գաղափարների մի նոր, թարմացած հոսանք Արևմուտքից»: Հետևում է Ռուբինյան թագավորության Բրյուսովի ծավալուն, բառացիորեն հիացական, անգրագարձը՝ պսակվելով Արևմտյան Եվրոպայի հետ Կիլիկյան թագավորության հարաբերությունների թվարկումով. 1198-ին Հռոմի պապի և գերմանա-հռոմեական կայսեր Ռուբինյաններին շնորհած թագավորական տիտղոս. միմյանց միջև բազմաթիվ ամուսնություններ. առևտրական լայն կապեր Ջենովայի, Վենետիկի հետ. մինչև իսկ Կրետեից՝ Լոնդոնի հետ: Ընդ որում, մերձեցումն այնքան է խորանում, որ Բրյուսովի շեշտագրումով՝ Կիլիկյան պետական կառույցները համընկնում են արևմտյան ֆեոդալական ձևերին, հարուցելով ներսես Լամբրոնացու գծագրությունը, թե «բնակչությունը Փրանկներից ընկալում է անցողիկ բարիքների սեր...» և այլն²⁰:

¹⁸ Նույն տեղում, էջ 65:

¹⁹ Վ. Բարսողի, Թ. Թորամանյանի, Ն. Մառի, Տ. Կոպտերևի և այլոց տեսակետների մասին մանրամասն տես Գ. Շ ա ի կ յ ա ն. Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը VIII–IX դարերում. Երևան, 2004, էջ 100–107 և այլն:

²⁰ Վ. Բրյուսով. Նշվ. ժող., էջ 67:

Այնուհետև ակնարկապատմադիր Բրյուսովը Կիլիկյան թագավորութ-
յան կողքին, թեև թռուցիկ անդրադառնում է Հյուսիսային Հայաստանին՝
Վրաստանի հետ Երկայնարագուկ-Ջաքարյանների հարաբերություններով
հանդերձ, նույնքան թռուցիկ մոնղոլական և թուրք-օսմանյան արշա-
վանքներին, Հայաստանի անկախության վերացմանը, ապա XVI, XVII և
XVIII դդ. թուրքիայի և Պարսկաստանի միջև արյունոտ պատերազմներին՝
մեծապես Հայաստանի հողի վրա... Ուրեմն և, ինչպես արձանագրում է
Բրյուսովը, եվրոպական նոր գաղափարներ դավանելով, հայոց մշակույթն
արդեն զարթոնք է ապրում հայկական գաղութներում՝ Վենետիկում,
Վիեննայում, Ամստերդամում, Փարիզում: Քանի որ, ըստ Բրյուսովի՝
«...երկհաղարամյա կուլտուրան, իհարկե, չէր կարող ջնջվել»²¹: Իսկ ահա՝
XIX դ. սկզբներին էլ հայկական որոշակի մարզեր անցան «Ռուսաստանի
գալիսոնի ներքո»:

Հասարակական-քաղաքական այդ վիճակով էլ հայկական գաղութնե-
րում ծավալվում է մշակութային զարթոնքը՝ եվրոպական նոր գաղա-
փարների ոգով, հայկական առաջին տպարան-տպագրություններով: Պարզ
է, ակնարկի բոլոր հարցադրումներով և պատասխաններով Բրյուսովն ա-
ռաջնորդվում է հենակետ ունենալով հիմնավորապես հունավորվող ժա-
մանակի հայադիտությունը:

Հարցերի հարցը՝ աշխարհաբար-գրաբարի հարցն էր, որից և սկսում է
Բրյուսովը՝ արձանագրելով աշխարհաբարի հաղթանակը հօդուտ դրակա-
նություն արդասավոր հեռանկարի, մյուս կողմից ժողովրդի տարանջատ-
վածությունը պայմանավորված լեզվի աղճատվածությունը՝ արարատյան
ու պոլսականի: Դա էլ Արևելք-Արևմուտք ազդեցությունը դիտարկվում էր
պատմականորեն՝ ահա այսպիսի եզրակացություններով. «Եթե հայ ժողովրդի
պատմական միսիան պետք է ճանաչենք այդ երկու, մշտապես հակամար-
տող նախասկիզբների սինթեզի որոնումները, ապա հայ դրականությունը
պետք է արտացոլի իր մեջ այդ որոնումների հանդրվանները: Եվ ամենից
առաջ արտացոլի այդ տարբեր տարրերի պայքարը, իսկ դրանց ներդաշնակ
հաշտեցման առաջին փորձերը պետք է կատարի քնարերգությունը՝ որպես
ժողովրդական հոգու ձայնը»: Եվ ապա. «Հայ ժողովրդական բնավորու-
թյան երկմիասնությունը տալիս է հայ ժողովրդական պոեզիան ըմբռնելու
բանալին»²²:

Եվ սկսում է վարդի ու բլբուլի՝ իր ասելով մի ժողովրդական հեքիա-
թից՝ ավելացնելով, թե՛ «ըստ երևույթին խիստ հնուց եկող»: Ստուգաբան-
վում են վարդն ու բլբուլը. ապա շարունակվում է Մ. Խորենացի, Գ. Մա-
գիստրոս, հեթանոս աստվածներ... Գրիգոր Լուսավորիչ-Քրիստոս վկայա-
կոչումներով կիսահակասական նման հետևություններով: Մոտավորա-
պես այսպիսի, այն է, թե՛ ինչպես բոլոր ժողովուրդների, հայ ժողովրդի
միջավայրում ևս ժողովրդական երգերը սերնդեսերունդ մոռացվում են,
ըստ այգմ, հարկ է ժողովրդի հիշողության մեջ ամրագրված ժողովրդի
սրտին ամենամոտ, թանկն ու անմոռանալին ընդհանրացնելով՝ գատել, ի

²¹ Նույն տեղում, էջ 68:

²² Նույն տեղում, էջ 69:

մի բերել ոչ թե առանձին-առանձին, այլ այնպիսիք, որոնք խտացնում են ժողովրդական ոգին:

Նման եզրակացություններ, ըստ էության, Բրյուսովը նվազեցնում էր Արևելք-Արևմուտք ազդեցությունների կշիռը: Ըստ այդմ, առանձնացվում է ժողովրդի հոգևոր «բնական ընտրությունը», այն էլ ոգեղեն նշանակետ ընտրելով երգը՝ դարեդար հղկված, բյուրեղացած: Ուրեմն և ծավալուն մի ամբողջ ենթամասով ակնարկում մեծադիր էջեր են նվիրված քնարական երգին՝ ներառյալ հոգևոր երգ-երաժշտությունը: Այնուհետև Բրյուսովը հատկանշիչների դիդակտիկ համեմատություններ զուգահեռներ է անցկացնում այլ ժողովուրդների երգերի հետ՝ մեկ գերմանական, մեկ պարսկական, ինչպես. «Իր ամբողջ կրթություններ հանդերձ՝ հայ երգը ողջախոհ է. ամբողջ կրակոտություններ հանդերձ՝ արտահայտությունների մեջ զուսպ է: Սա մի պոեզիա է արևելյան ձևով գունագեղ, արևմտյան ձևով իմաստուն. ճանաչում է կսկիծ առանց հուսահատության, կիրք՝ առանց մոլագարության, հիացմունք՝՝ գերծ անզսպությունից»²³ և այլն, և այլն: Ընդամենի, թե իմաստային հղացումներով և թե երգ-երաժշտության բազմազանություններ քնարերգությունը համարելով ժողովրդական բանահյուսության տիրապետող տեսակ՝ Բրյուսովը գատում և քննականորեն ցուցադրում է ժանրային նմուշներ, ասենք հարսանեկան, օրորոցային, ամեն դեպքում առանձնակի հատկանիշներով, որպիսիք հաճախ հիշեցնում են կոմիտասյան իմաստային հղացումներ: Ի տարբերություն Սասնա ծռերից Սասունցի Դավիթ պատումի, որ ներկայացված է անհամեմատ կարճառոտ անդրադարձով որպես ժողովրդի հիշողության մեջ հարատևած բանավոր «պատմողական բանաստեղծություն»։ Ի լրումն, ցավոք, դարձյալ «ազդեցություն» կոչվածի անտեղի մտաբերումով:

Իսկ գրավոր պոեզիան Հայաստանում ծայր է առնում հայոց այբուբենի գյուտից հետո՝ V դարից: Ուրեմն և կրկին հիշատակվում են Ս. Մեսրոպ և Սահակ՝ վկայաբանական լայն շառավիղով Ազաթանդեղոս ու Բյուզանդ ... միանգամից այսպիսի հիշարժան ծանուցումով. «Ժամանակակից գիտությունը հրաժարվում է ընդունել, որ նույն դարը ականատես լինի և՛ հայ գրության ծնունդին, և՛ նրա արագ ծաղկումին, որ արտահայտվել է Սուրբ Գրքի սքանչելի թարգմանության մեջ (որը մի արևմտյան քննադատ անվանել է «Թագուհի թարգմանություն») և դրան հաջորդած հայ մատենագրության «ոսկեդարում»²⁴: Ի լրումն Բրյուսովն արձանագրում է, որ, թերևս, հավանական է այն կարծիքը, թե մեսրոպյանից առաջ եղել է անմշակ մեկր կամ էլ պատմիչները գրել են այլ լեզվով՝ հունարեն կամ ասորերեն: Ինչևէ. այս պարագայում առաջնությունը պատկանում է հունարենին, որը Սուրբ Գրքի հետ մեզ է փոխանցվել քրիստոնեական եկեղեցական կարգ ու կանոններով՝ սկսած ծիսական պատարագ բառից: Ըստ այդմ էլ, բառի մուտքից չափածոն ու երգը եկեղեցում գործում են զուգակից՝ հարատևելով առ այսօր:

Ասենք, որ պատմագրական ակնարկի այս էջերը Բրյուսովը շարադրել է հանգամանալի ու հետաքրքիր դիտարկումներով, տեղ-տեղ ներշնչանքով,

²³ Նույն տեղում, էջ 72:

²⁴ Նույն տեղում, էջ 74:

մանավանդ, երբ անդրադառնում է հելլենական-հունա-լատինական աղբյուրների համեմատական քննությանը: Հատուկ բացատրություններով ու սահմանումներով, ինչպես հնադարյան շարականը՝ որպես դարերդար շարունակվող «հոգևոր երգ»՝ կատարելագործվող փոփոխականերով: «Ավելի հնագույնների մեջ գերակշռում են (են-ի փոխարեն է – Ան. Զ.) չափածոն, որ սակայն ենթարկված է նորոշակի տաղաչափության. ավելի նորերի մեջ՝ կոնդենսացված արձակը, որ հարուստ է հնչյունային տարբեր գարդերով (ալիտերացիաներով և այլն)», – գրում է ակնարկագիրը: Ապա, վկայակոչելով Մ. Հիմինին, ավելացնում է. «Շարականի» հետազոտող ... Մ. Հիմինը նշում է, որ ավելի հին երգերի մեջ «ընթերցողին զարմացնում են ձևի պարզությունը, բովանդակության հստակությունը, պատկերների ինքնատիպությունը և ոճի հանդիսավորությունը»²⁵:

Այսպես շարունակվող մեկնությունները՝ պարզ երգերից օրհներգ, հիմն ... Գր. Նարեկացու պարագայում արդեն Բրյուսովն արձանագրում է. «Սակայն Գրիգոր Նարեկացու փառքը հիմնված է նրա հեղինակած հոգևոր օրհներգությունների վրա, որոնք իրավամբ կոչվում են «սրբազան եղբերեբեր»»: Եվ վերջապես առանց «ազդեցություն» հոլովելու լիաշունչ հավաստում է Նարեկի հանճարեղ հնչեղությունը, գրելով. «Ըստ որում Գրիգոր Նարեկացին բարձր կատարելության է հասցրել բանաստեղծության ձևը, սիրով մշակելով «հնչունագրությունը» շատ ավելի առաջ, քան դա ծաղկեց պարսկական և արաբական քնարերգության մեջ»²⁶: Ինչպես տեսնում ենք՝ դարձյալ չմոռանալով Արևելքը:

Նարեկացուց անցնելով հաջորդներին՝ XI–XIV դդ. ընթացքներով Բրյուսովն առանձնացնում է Ն. Շնորհալուն, Ն. Լամբրոնացուն և Հ. Երզնկացուն: Մեծ բաժինը, իհարկե, ընկնում է Շնորհալուն: Գնահատականները բարձր են. շարականական հիմներից էլեգիաներ, պոեմ և սլաոմոզական էջեր՝ հավասարապես: Եվ սակայն առավել ոգեշունչը Բրյուսովը համարում է հայոց այբուբենի տառերով հարածող խրատականը՝ խոսքի ու երաժշտության միաժամանակյա ոգեշունչ պոեթիկումով: Ուշագրավ է նաև, որ Շնորհալուն նվիրված բաժինը վերջավորվում է Արշակ Չոպանյանից քաղաքերված՝ այս դեպքում էլ Արևմուտք մտաբերվող տողերով: Այն է, թե՛ «Ա. Չոպանյանի իրավացիորեն Ներսես Շնորհալուն անվանում է «եկեղեցու մեծագույն բանաստեղծներից մեկը» և նրա օրհներգերի գուգահեռը հարկ է լինում փնտրել XIX դ. Վեուլենի մոտ, նրա «Sagesse» («Իմաստություն» – Ան. Զ.) գրքում»²⁷: Իսկ վերջում էլ հարկ է համարում նշել, որ ժողովածուում թարգմանաբար զետեղված են մի քանի «լիրիկական օրհներգեր» և հատվածներ Եգեսիայի առումից²⁸:

²⁵ Նույն տեղում, էջ 77:

²⁶ Նույն տեղում, էջ 78:

²⁷ Նույն տեղում, էջ 79: Նկատենք, որ «Սովետական գրականություն և արվեստ» հանդեսում տպագրված ակնարկի թարգմանության մեջ, գաղափարական ու քաղաքական հայտնի նկատառումներով, տեղ չեն գտել Արշակ Չոպանյանի ոչ անունը, ոչ էլ նրանից բերված վկայակոչումներն ու նրան վերաբերող Վ. Բրյուսովի խոսքերը:

²⁸ Ի դեպ, այս նախադասությունը մեր օգտագործած հայերեն թարգմանությունների մեջ բաց է թողնված (տե՛ս «Поэзия Армении...», с. 49):

Հիրավի, Կիլիկյան թագավորությանը անդրադառնալիս Բրյուսովը դրսևորում է նկատելի «կողմնապահություն», և Շնորհալուց հետո, իրավամբ, լիաթոք տարածվում է և Ն. Լամբրոնացու վրա, գրելով, որ թեև տաղերի մեջ պակաս է «անմիջական ոգեշնչումը», սակայն «...իր ամբողջ ժամանակաշրջանի (XII դ.) ամենակրթված մարդկանցից մեկն էր: Նա էլ (էլ-ի փոխարեն՝ Նաև - Ան. Զ.) թողել է բազմաթիվ երկեր, որոնց մասին նրան ժամանակակից եվրոպական հեղինակավոր անձինք մեծագույն գովեստով են խոսել: Հույներն ու «Ֆրանկները» նրան անվանում էին «երկրորդ Պողոս առաքյալ» և սքանչանում էին նրա սրբության, իմաստության ու գիտնականության վրա»²⁹:

Եվ պատմական ժամանակակարգով՝ ակնարկի հեղինակն անցնում է միջնադարյան հայ քնարերգության հաջորդ XIII - XVI դդ. ընթացքներին: Դա էլ իր ներսում բաժանվում ու ներկայացվում է XIII - XIV և XIV - XVI մասերով, որոնցից առաջինը, բնականաբար, շաղախված է սլատմական ահեղ անցուդարձով: Այն է, թե՛ երբ ժողովուրդների վերաբնակեցման դարաշրջանում Հայաստանին վիճակվում է սև օրերից ամենասևր (Բրյուսովի սահմանումով՝ «Հայաստանը իրերի բերմամբ նետված էր ժողովուրդների տեղափոխության դարաշրջանի ամենասև օրերը»), Հայաստանը կորցնում է անկախությունը: Ասլա նույն սահմանման շրջանակում հիշատակելով հոգևոր կորուստներ, Բրյուսովը հիացմունքով շարունակում է. «Եվ միայն քնարերգության համար սկսվեց ծաղկման նոր ժամանակաշրջան, հարուստ ու շուրջ հունձի շրջանն այն բանի, որ ցանել էին նախընթաց դարերը: Եվ, իհարկե, կուլտուրական զարգացման հենց այս երկար դարերով, նրանց հոգևոր կյանքի լարվածությունը է բացատրվում բոլոր երկրային արվեստներից ամենավեհի, ամենանրբի, ամենադյուրաբեկի՝ գուտ սուբյեկտիվ լիրիկայի այդ փայլուն ծաղկումը:

Հայկական միջնադարի քնարերգությունը հայ ժողովրդի բարձրագույն և ամենաինքնուրույն հորինվածքն է սլոտական ստեղծագործության ասպարեզում: Հայ միջնադարյան քնարերգությունը համարյա ոչ մի կախում չունի եվրոպական պոեզիայից: Եվ ի՞նչ կարող էր տալ լիրիկական ստեղծագործությանը XIII - XIV դարերի արևմտաեվրոպական պոեզիան, որ դեռ նոր էր ծնունդ առնում բոլոր երկրներում, չբացառելով և առաջավոր Իտալիան»³⁰:

Եվ այսպես շարունակում է Բրյուսովը՝ հերքելով «ազդեցություն» կոչվածը, հաստատելով, թե՛ «...ոչ մի բարերար «ազդեցություն» չի կարող արվեստ ստեղծել այնտեղ, ուր դրա հատիկը չկա»³¹:

Փաստորեն և էպպես այս հանգանականով էլ բնութագրվում է հայ միջնադարյան և աշուղական պոեզիան՝ ներառյալ Սայաթ-Նովա: Սկսած XIII - XIV դդ.՝ Յրիկ, Հովհաննես Երզնկացի ու Կոստանդին Երզնկացի եռյակից. երեքն էլ ժողովածուում զետեղված են Բրյուսովի թարգմանած մեկ-երկու նմուշով՝ ամբողջութայամբ կամ հատվածաբար: Կարելի է ասել ընտիր էջեր՝ ստեղծագործական-կենսագրական տվյալներով ու բնու-

²⁹ Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 79:

³⁰ Նույն տեղում, էջ 82-83:

³¹ Նույն տեղում, էջ 84:

Թարգրով: Ամեն գեպքում նախորդ ժամանակաշրջանի կրոնական պոեզիայից սերտաճած արդիականը, արդիական հարցերի արձագանքելու կոչված զդալի տարբերությունը: Էպոսն բեկումնային-դարակազմիկ, որ նշանավորվում է նախ «Շարականում» տեղ գտած «դիդակտիկական տաղերով», ասել է՝ «իմաստական ասքերով»: Դրանից հետո Ֆրիկի պոեզիայով, որը նույնպես Բրյուսովը համարում է «դիդակտիկ», և, սակայն, արդեն համարձակորեն դիմում է «ամենահրատապ արդիականությունը»: Այդ ելակետից էլ նա Ֆրիկին անդրադառնում է հանգամանորեն, վկայակոչելով նաև Ա. Չոպանյանի ուշադրավ այս տողերը. «Այն ժամանակ, երբ հին դարերի հայ գրողների մեծ մասը... հետևելով աստվածաշնչյան մարգարեների օրինակին, Հայաստանին բաժին ընկած աղետները վերագրել է որպես պատիժ իրենց մեղքերի համար, Ֆրիկն ըմբոստանում է հենց Աստուծո ղեմ և բողոքում հայ ժողովրդի նկատմամբ նրա անարդարացիության համար»³²:

Այսպես ընդգծված-չեղտադրված տողերով ոուս ընթերցողին Բրյուսովը ծանոթացնում էր Հայ ժողովրդի պատմությանը՝ իր ժամանակի անելանելի բախտի հետ ձայնակցությունը, բայց և հառնման հավատով: Փրկարար սպեղանին ժողովրդի հնազարյան մշակույթն է՝ չխամրող փառքով, աշխարհիկ բանաստեղծների նորանոր սերունդներով: Այդ շարքում Բրյուսովն առանձնացնում է Կոստանդին Երզնկացուն՝ ժողովրդական կենդանի լեզվով, աշխարհիկ մոտիվներով, այդ թվում սիրո, որ այնուհետև դառնում է քնարերգության տիրապետող մոտիվներից մեկը: Այդ ելակետից էլ Բրյուսովն ընտրում-թարգմանում է բանաստեղծի «Բան դարնան» պոեմը՝ հյուսված «հեթանոսական ոգով», կենսականության ինքնաբուխ պոթկումով: Ավելին. «Չափածոյի ու լեզվի ուժով և ավյունով՝ այս պոեմը պատիվ կբերեր այդ դարի Արևմտյան Եվրոպայի ամեն մի դրականության, իսկ Եվրոպան նույնիսկ ոչինչ չունի դրան հակադրելու: ...պոեմը ... իր բոլոր մասնիկներով պատկանում է Վերածնունդի վեհ շնչին»³³, - դրում է Բրյուսովը:

Հետդարձն ու շրջանցելն արդեն բացառված էր. քնարերգության աշխարհիկ հունը՝ բնույթով ու էությունով ալիս օրինաչափություն էր: Եվ XIV, XV, XVI դդ. ընթացքներով թվարկվում են՝ Առաքել Բաղրիչեցի, Մկրտիչ Նաղաշ ... Հովհաննես, Հովհաննես Թլկուրանցի... Գրիգոր Ախթամարցի և ուրիշներ, որոնք շարունակելով կատարելագործել են սերմանածը՝ ազդեցություն ու նորամուծություն-նորարարություններով, ինչպես Բաղրիչեցին՝ ալեգորիկ բովանդակությամբ, Մկրտիչ Նաղաշը՝ Ֆրիկի ավանդներին հակառակ՝ իր խրատներով բերում է հոգևոր մեղմություն, մխիթարություն, քրիստոնեական անեղծ զգացումներ:

Դառնալով Հ. Թլկուրանցու քնարերգությանը՝ Բրյուսովը մատնանշում է կուռքի հասնող սերը, առհասարակ սիրո մոտիվը, որը Մ. Աբեղյանը դիտարկեց որպես «կենսասիրություն»՝ «էական գիծ» ընդդեմ «ատելության ու գարշանքի մահից»³⁴:

³² «Поэзия Армении...», с. 54. Այս հատվածը մեր օգտագործած հայերեն թարգմանությունների մեջ բաց է թողնված:

³³ Վ. Բրյուսով, նշվ. ժող., էջ 86-87:

³⁴ Մ. Աբեղյան, Երկեր. Դ, Երևան, 1970, էջ 484:

Ռուս բանաստեղծն անդրադառնում է նաև «չատ քչերին ծանոթ» Հովհաննեսին, որից «Մեզ հասել է... լոկ մեկ բանաստեղծությունը. սակայն դա բավական է, որպեսզի պոետն իր ինքնուրույն տեղն ունենա լիրիկայի պատմություն մեջ»³⁵: Այնուհետև, գնահատելով և արժեքավորելով այդ ստեղծագործությունը, Բրյուսովն արձանագրում է. «Իսկական կրքոտ այդպիսի ճիչեր չկան ո՛չ Պետրարկայի սոնետներում, որ ապրել է մի հարյուրամյակ առաջ, ո՛չ էլ Ռոնսարի սիրային երգերում, որ հավանաբար գրել է մի հարյուրամյակ հետո»³⁶: Ավելին. համաշխարհային պոեզիային քաջատեղյակ Բրյուսովը շարունակում է. «...կարևորն այն է, որ բանաստեղծը գտել է այնպիսի խոստովանություններ («Զսիրտս էրեցիր ու սղկեցիր...»), որոնք լիովին հասկանալի դարձան միայն մեր օրերում, երբ և՛ Ալֆրեդ Գրեյ-Մյուսեն, և՛ Հայնեն, և՛ Բոդլերը տվին իրենց հայտնությունները...»:

Եթե թվուրանցու կենսագրական տվյալները կարճառոտ են, իսկ Հովհաննեսինը բացակայում են, ապա Գրիգորիս Աղթամարցին ներկայացված է հանգամանորեն: Տրված գնահատականները բարձր են, թե՛ «պահպանված պոեմները» աշխարհիկ բովանդակության և թե՛ արտահայտչական արվեստի ու կառուցվածքային առումներով: Ինչ վերաբերում է Արևմուտք-Արևելք բնույթին, ապա քրիստոնեական գաղափարաբանության առանցքով այն արևմտյան է, պատկերավոր բնույթով արևելյան, հատկապես մակդիրային հատկանիշներով, և Բրյուսովը թվարկում է այդպիսիք՝ գրելով. «... պոետը փառաբանելով իր սիրուհուն, տասնյակ ցայտուն նմանեցումներ է որոնում-գտնում համեմատելով նրան արևի, լուսնի, լուսաստղի, թանկարժեք քարերի, անուշաբույր ծառերի, փայլփլուն ծաղիկների, այն ամենի հետ, ինչ սքանչելի է աշխարհում»³⁷: Ինչ խոսք, նկատի ունենալով առհասարակ տաղերը, ի մասնավորի ժողովածուում տեղ գտած «Տաղ վասն վարդի»-ն:

Դառնալով XVI դ. մյուս բանաստեղծին՝ Նահապետ Քուչակին, Բրյուսովը նախ շարադրում է եղած տարակարծությունները: Վիճահարույց հիմնականը հայրենների որոշակի արտահայտությունների նմանություն-համընկնումն էր ժողովրդական երգերին, այնքան որ Քուչակը նույնիսկ համարվում էր «լոկ ժողովրդական երգերի հավաքող», արձանագրում է ակնարկագիրը, ամեն դեպքում հաստատելով. «Բայց ով էլ որ լինի պատմական Նահապետ Քուչակը և որ տարիներին էլ ապրած լինի նա (համենայն դեպս ապրել է միջնադարի վերջին), նրա տաղերը մնում են հայ պոեզիայի ամենասքանչելի մարգարիտները»³⁸: Քառատող քնարական մարգարիտներ՝ սիրո և պանդխտության, որոնցից ընտրությունամբ թարգմանել են Բրյուսովը, Սյուգուբը, Շերվինսկին: Դրանց կողքին է նաև հանրահայտ «Կոունկը». դարձյալ վիճահարույց: Այնուհետև փակադժեր է բացում Բրյուսովը, հայտնելով, թե Քուչակին բնութագրելիս ինքն օգտվել է Չոպանյանից, ըստ որի Քուչակը ի տարբերություն Սաադիի, Հա-

³⁵ Վ. Բրյուսով, նշվ. ժող., էջ 90:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Նույն տեղում, էջ 92:

³⁸ Նույն տեղում, էջ 93:

Ֆեզի և անգամ Օմար խայամի, որոնք եղել են արքունի բանաստեղծներ, ծառայել «աշխարհի հզորներին», մինչդեռ «Միակ սուլթանը, որի առաջ Քուչակը խոնարհում էր իր գլուխը, նրա հավերժական ու տիրական հրամայողն էր՝ սերը: Ա. Չոպանյանը գերադասում է Նահապետ Քուչակին համեմատել XIX դարի բանաստեղծներին՝ Հայնեի ու Վեռլենի հետ, և դա իրավացի է (արդարացի է — Ան. Զ.)»³⁹:

Սրանով վերջավորվում է ժողովածուի «Միջնադարյան պոեզիա և աշուղական երգեր» ծանրակշիռ գլխի երրորդ ենթագլուխը: Հետևում է հորորորդ՝ XVII—XVIII դդ. — Երեմիա Քյոմուրճյան, Նաղաշ Հովնաթան, Ստեփաննոս եռյակը, որով և սկզբնավորվում է աշուղական պոեզիան: Վերստին ժողովածուում տեղ գտած սիրերգերով, որոնք արգեն բնույթով փոխադարձ են և ցույց են տալիս «ոչ միայն սիրելու, այլև սիրվելու հրճվանքը»: Հասկանալի է, այդ սիրուց մեծ բաժին է հասել և Նաղաշ Հովնաթանին, նրա արևային սիրերգերին: Դրանք Բրյուսովը նմանեցնում է ռապսոդիաների, ժողովրդական երգերի հետ, որոնք Հայաստանում ընտանի են եղել տակավին խորենացու վկայութամբ: «Հայերը, այդ «արվեստագետ ժողովուրդը», սիրում էին բոլոր հանգեսները երգով կատարել: Ընտանեկան հանգեսներում, ինչպես հարսանիք, մկրտութուն և այլն, ժողովրդական հավաքութենում, պարզապես շուկաներում ու սրճարաններում երգիչները միշտ էլ ցանկալի հյուր էին: Խնջույքի ժամանակ նրանց պատվավոր տեղ էին հատկացնում. նրանց երաժշտական գործիքների (քյամանչա, սազ, թառ և այլն) համար պատվավոր տեղ էին տալիս մի հատուկ դարակի վրա. ամենքն էլ լուռ էին և ուշադիր ունկնդրում»⁴⁰, — գրում է Բրյուսովը: Ապա ավելացնում է, որ աշուղներից շատերի երգը իրենց հետ մոռացվել է, սակավաթիվ բացառությամբ, և նրանցից մեկն է «Հանճարեղ» Սայաթ-Նովան՝ ծնված Նաղաշ Հովնաթանի մահից (1722) երեք տարի առաջ: Բրյուսովի դիտարկումով՝ ժառանգելով նախորդների չգնահատված ավանդները, որոնցով մեռնում էր «գիտնական վանականների մենաստանյան պոեզիան», Սայաթ-Նովան ապացուցեց, որ «հայոց բանաստեղծութունը կենդանի է»: Ըստ այդմ, վերաքաղում է տողեր Թումանյանի հետազոտությունից, ըստ որի Սայաթ-Նովան Արութինի կեղծանունն է, և նշանակում է «երգեցողության թաղավոր» կամ «երաժշտության տիրակալ» (հինդուստանի լեզվով, որը լայնորեն հայտնի էր Առաջավոր Ասիայում): Ապա շարունակում է հանգամանորեն պատմել Սայաթ-Նովայի կենսագրությունը՝ նաև ըստ Թումանյանի արխիվային նորահայտ

³⁹ Նույն տեղում, էջ 94: Ինչպես հայտնի է, հետադադարում Մ. Աբեղյանի մանրագնին հետազոտությամբ հայրենները ճանաչվեցին որպես ժողովրդական ստեղծագործություն՝ հյուսված ոչ թե XVI դ., այլ ավելի վաղ: «Կոունկն» էլ երեք տարբերակով համարվում է անհայտ բանաստեղծի ստեղծագործություն: Տե՛ս «Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտուններ (ուրախության, սիրո, հարսանիքի, օրորոցային, լացի)»: Հավաքեց և խմբագրեց գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. դոկտ. Մանուկ Աբեղյան, Երևան, 1940, էջ 5-37, «Հայրեններու բուրաստանը»: Համախմբեց և լույս ընծայեց քննական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով Արշակ Չոպանյան. Փարիզ, 1940, Ա. ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր. Երևան, 1956, Ծ. ն ա գ ա ը յ ա ն. «Կոունկ» երգը և նրա սլոտությունը. Երևան, 1977, «Գանձարան հայ հին բանաստեղծության». աշխատասիրությամբ Պողոս Խաչատրյանի, Երևան, 2000, էջ 903-905, 935:

⁴⁰ Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 96-97:

նյութերի: Ներառյալ ողբերգական վախճանը 1795-ի պարսից Աղա-Մահ-մեդ խանի արշավանքի օրերին:

Եվ, իրոք, հիացմունքի են արժանի Սայաթ-Նովայի արվեստի Բրյուսովի վերծանումները: Քննելով համարյա միշտ և ամենուրեք սեր խոստովանող, սեր երգող Սայաթ-Նովայի առաջին հայացքից միատուն թվացող չափատողները՝ Բրյուսովը հիացմունքով երանգ առ երանգ դիտարկում է. «Համարյա ամենուրեք նա խոսում է սիրո մասին, բայց որքան՝ գուցե գուցե են դրա նրբերանգները տարբեր բանաստեղծությունների մեջ, այդ բոլոր անցումները՝ խաղաղ քնքշանքից դեպի հրայրքոտ կիրքը, հուսահատությունից դեպի հիացմունքը, իրեն կասկածելուց դեպի արվեստագետի հպարտ ինքնագիտակցությունը: Իրավամբ Սայաթ-Նովային կարելի է անվանել «նրբերանգների բանաստեղծ»: XVIII դ. ասես նա կատարեց այն պատգամը, որ մեկ դար հետո տվեց Վեուլենը. ...«Ոչ թե գուցե, այլ միայն նրբերանգը»: Այո, վառ գույներ պետք չեն: Ճշմարիտ բանաստեղծը (ընդգծումը մերն է՝ Ա. Ջ.) ընթերցողին կամ ունկնդրին զգալ է տալիս ամեն ինչ՝ մի գույնից մյուսին հազիվ նկատելի անցումների ուժով: Բայց միաժամանակ և որքան՝ սուր, խոր ու հյուսիսեղ են Սայաթ-Նովայի երգերում այդ «երանգները»⁴¹:

Հիրավի, Սայաթ-Նովան նոր էր «հայտնագործվել», և 1916-ին Թիֆլիսում լայն հնչեղություն ունեին նրա տաղերը: Բացառված չէ, որ Բրյուսովն առիթ է ունեցել դրանք վայելելու հենց Թումանյանի հյուրընկալ հարկի տակ, այն էլ Նիկոլ Աղբալյանի կատարումով, որ համարվում էր «անմահ»: Բացառված չէ, որ հենց վերջինիս երգած տաղերն էլ թվով 12-ը՝ Բրյուսովի թարգմանությամբ տեղ են գտել «Հայաստանի պոեզիա» ժողովածուում: Ավելացնենք նաև, որ Բրյուսովն էլ թարգմանել և Ջիվանու «Ձախորդ օրեր» ու «Այգ գիշեր» տաղերը:

Եվ հենց այդտեղից էլ պատմության ընթացքների հետքերով պատմագրական ակնարկում հերթը հասնում է գրական լեզվին՝ արևմտահայ և արևելահայ, որ նույնությամբ փոխանցվում է գրականությանը: Արդարև, ճշգրիտ կողմնորոշումով լեզվի և գրականության նոր ուղղվածության ու միտումների քննությունը սկսում է արևմտահայ գաղութներից՝ Վենետիկից, Մխիթար Սեբաստացուց (1676-1749) և Մխիթարյաններից: Վերջինիս գեպքում հիշվում է նրանց գարակազմիկ գործունեությունը՝ սկսած պատմական Հայաստանի հեռու և մոտիկ բոլոր ծայրերից ձեռագրեր հավաքել, հնօրյա ձեռագրեր հրատարակել, բառարաններ կազմել... և ամենագլխավորը. Մխիթարյանների հաստատուն կողմնորոշումով է, որ գասական գրաբարին փոխարինեց աշխարհաբարը: Այգ ամենի իմացությամբ էլ, ահա, Բրյուսովը գրում է, թե Ղևոնդ Ալիշանը (1820—1901), աստիճանաբար հաղթահարելով կեղծ կլասիցիզմը, սկսեց գրել աշխարհաբարով: Ավելին, որ նա «թողել է գիտական բազմաթիվ արժեքավոր աշխատություններ պատմության, հնագիտության, աշխարհագրության և այլնի վերաբերյալ: Բայց նա ականավոր պոետ էր, և նրա բանաստեղծությունները ի մի վեցրած հինգ հատոր են կազմում: Չափածոյի տեխնիկայում Ալիշանը հասել

⁴¹ Նույն տեղում, էջ 101:

էր մեծ կատարելության և նրա երկերը մինչև հիմա էլ պահել են ընթերցողների զգալի մասի սերը, որպես անկեղծ ու գեղեցիկ ոգեշնչումներ»⁴²:

Իրավամբ, մեծ երախտավորի անգնահատելի ժառանգության կողքին հիշատակվում են և նրա պոեզիայի մոտիվներն ու ժանրերը, հատկապես ժողովածուում տեղ գտած «Հրագգանը» (Թարգմ. Ս. Շերվինսկի), որով՝ «պոեզիայի «հավերժական» թեման տարագրի վերադարձը հայրենիք, աշխուժացած ու ջերմացած է հայ հայրենասերի ուժգին զգացումով»⁴³:

Եվ սակայն ժողովածուում «Նոր պոեզիա II. Թուրքահայերի պոեզիա» բաժնում, ալիշանյան ավանդներով հանդերձ, Բրյուսովն արևմտահայ բանաստեղծական դպրոցի ճանաչված ներկայացուցիչ է համարում Մ. Պեշիկթաշլյանին և Պ. Դուրյանին՝ նոր ժամանակների եվրոպական գեղարվեստական խմորումներ և զարգացումներ ապրած մակարդակի չափումներով ու համեմատությամբ: Հիշատակելով Գյոթե և Շիլլեր, Հյուգո և Մյուսսե, Բայրոն և Շելլի, ի լրումն բացատրում է, որ հնագարյան բարձրակարգ պոեզիա ունեցող ժողովուրդը էլ կարող հաղորդակից և յուրացնողը չլինել եվրոպական դրական նվաճումների: Շեշտագրում է նաև, որ նոր ժամանակների գրողները պարզապես «... իրավունք չունենին միայն արվեստագետ լինել. հայրենիքի վիճակն ստիպում էր նրանց նույն չափով լինել կիսամոռացված ճշմարտությունների տրիբուն, մոլեռետիկ, արթնացնել ժողովրդական ինքնագիտակցությունը, կենդանացնել ու շնչավորել հայրենի երկրի սերը, կարյաց չափով գարմանել ազդի բազմադարյան վերքը, ամբացնել նրա ուժերը պայքարի համար և սատարել լավագույն ապագայի հավատը... Միայն այս մեծ խնդիրները հիշելով, որոնցից ոչ մեկը էլ կարելի չէր զոհել, կարելի է արդարացի կերպով գնահատել Պեշիկթաշլյանի, Դուրյանի, Պատկանյանի, Շահագիզի և այլոց արածը, որոնք «նախաձեռնողներն» էին, բայց և կարողացան իսկական պոետ լինել»⁴⁴:

Նույն այդ ելակետից ու չափանիշներով էլ բնութագրի է տալիս հավասարապես թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ նոր ժամանակների հայոց բանաստեղծության ու գրականության էությունը: Եվ առաջինը Բրյուսովը բնութագրում է «Ալիշանի անմիջական աշակերտ» Պեշիկթաշլյանին. կենսագրական հղումներով, բնավորությամբ, որպես «հայրենիքի, սիրո ու բնության» երգչի: Բանաստեղծություններ, որոնցից ժողովածուում գետեղված են 5-ը⁴⁵: Նկատում է և ազդեցությունը Հայնեից ու Մյուսսեից, թերևս նաև «ուրիշներից», գլխավորապես ֆրանսիական բանաստեղծներից:

Խառնվածքով միանգամայն տարբեր է համարում Բրյուսովը Պ. Դուրյանին. ռոմանտիկ և՛ համոզմունքով, և՛ բնույթով, աշխարհի առջև կրակոտ սիրով ու ծառայումով՝ հանուն հայրենիքի, կորովի ծառայումով՝ հանուն ինքնահաստատման անգամ Աստծո դեմ, որքան անձնական, նույնքան համամարդկային զգացմունքներով: Ի վերջո, վաղամեռիկ բա-

⁴² Նույն տեղում, էջ 105:

⁴³ Նույն տեղում, էջ 106:

⁴⁴ Նույն տեղում, էջ 107:

⁴⁵ Ակնարկում սխալմունքով նշված է ութ («Поэзия Армении...», с. 72): վրիպումն ուղղված է է՛ն ո՛չ ժողովածուի 1966, 1973-ի հրատարակություններում և ո՛չ էլ հայերեն թարգմանությունների մեջ:

նաստեղծի սուլյն բարձրակարգ գնահատությունը. «Պատանի Դուրյանը մնում է Հայ պոեզիայի պատմության մեջ, որպես վառ, հրաշեկ շտրիխ. ի թիվս մյուս, ավելի հանդարտ բանաստեղծների, նա ցույց տվեց, թե ինչ է նշանակում ստեղծագործության մեջ «ավյունը», անմիջական ապրումների ուժը, որոնք հաճախ ոչ միայն փոխարինում են «դպրոցին», «տեխնիկային», այլև անչափ վեր են բարձրանում դրանցից...»⁴⁶: Արձանագրում է և բանաստեղծական տող ու տուն ձևավորելու նրբաճաշակ հմտությունը՝ սովորած-նախընտրած ֆրանսիական բանաստեղծներից՝ Հյուգոյից և Լամարտինից:

Նկատենք նաև. մինչդեռ ժողովածուի բուն թարգմանությունների մասում «Նոր պոեզիա» բաժնով նախ ներկայացված է արևելահայ բանաստեղծությունը, ապա արևմտահայը, պատմադրական ակնարկում տեսնում ենք հակառակը: Իրավամբ, բայց և նրբանկատորեն թվարկվում են XIX դ.՝ 1825-ից 1875 թթ. բանաստեղծների ու գրողների մի ամբողջ շարք. Գալֆայան, Աճեմյան, Ռուսինյան, Ծերենց... Մամուրյան, Օտյան, Պարոնյան, Տեմիրճիպաշյան ... և ուրիշներ: Նրանցից շատերը օժտված բանաստեղծներ են, որոնք, ըստ ճաշակի, մեծ մասամբ ֆրանսիական բանաստեղծներից՝ Հյուգոյից, Մյուսեից, Լամարտինից և ուրիշներից փոխառնելով՝ փորձարկելով ու մշակելով բանաստեղծական տարբեր մոտիվներ ու ժանրեր, ընտանի են դարձրել և հարստացրել հայկական պոեզիան:

Հենց այստեղից էլ Բրյուսովն անցնում է «ռուսահայերի դպրոցին», բնականաբար, շեշտադրելով ուշանալը Մխիթարյանների համեմատությամբ: Եթե Մխիթարյանները XVIII դ. Արևմուտքում արդեն ունեին ձևավորվող գրականություն՝ թեկուզ «մեռյալ» դրաբարով, «ռուսահայ» միջավայրում այն հասկանալով հասունանում է XIX դ. կեսերին: Ճիշտ այն միջոցին, երբ արևմտահայ իրականության մեջ ևս փորձում են գրել պոլսահայերեն: Զուգադիպությունը, Բրյուսովի կարծիքով, օրինաչափ էր, և նշանավորվում է բուն Հայրենիքի հողի վրա ապրող ժողովրդի խոսակցական լեզվի «արարատյան բարբառի» հաղթանակով. ասել է պսակվելով 1840-ականներին ստեղծված Խաչատուր Աբովյանի անմահ «Վերք Հայաստանի»-ով, որ լույս տեսավ 1858 թ.: Հետևում են 1850–1851-ին Թիֆլիսում Գ. Պատկանյանի հիմնադրած «Արարատը», ապա 1858-ին Մոսկվայում Ս. Նազարյանցի և Մ. Նալբանդյանի «Հյուսիսփայլը», 1872-ից Թիֆլիսում լույս տեսնող Գ. Արծրունու «Մշակը» և այլ պարբերականներ՝ ամսագրեր ու լրագրեր:

Այսպիսով, Բրյուսովի հավաստումով՝ աստիճանաբար ուղի է հարթում աշխարհաբարը: Առաջատար ունենալով արձակը՝ Պ. Պոռոչյանի, Բաֆֆու վեպերն ու Գ. Սունդուկյանի՝ Թիֆլիսի բարբառով գրված, ըստ Բրյուսովի, «կենցաղային սքանչելի դրամաները»: Ինչ խոսք, «կենցաղայինը» այն է, և պետք է, որ առանց շրջանցելու արձանագրվեր երեքի էլ ստեղծագործության սոցիալ-հասարակական էությունը՝ բարքերով հանդերձ: Էսպես ամենից առաջնային-առանցքայինը «նոր դարի» ինչպես մարդկային հասարակություն, այնպես էլ գրականության: Ինչևէ. բավարարվենք Բրյուսովի ճշգրիտ սահմանումով, ըստ որի թե՛ Բաֆֆու, թե՛

⁴⁶ Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 109:

Սունգուկյանի ստեղծագործությունը ըստ ամենայնի ջերմ ընդունելության են արժանացել լայն հասարակայնության շրջաններում, և անցնենք «նոր պոեզիային»՝ ի դեմս Ռափայել Պատկանյանի ու Սմբատ Շահազիզի:

Ռ. Պատկանյանի կյանքի ու գործունեության մասին խոսքը Բրյուսովն սկսում է Պատկանյանների տոհմից՝ Մխիթարյանների սան Քերովբե Պատկանյանի ազգանվեր գործունեությունից՝ Նոր-Նախիջևանում, որ շարունակում են ծավալել որդիները՝ Թիֆլիսում, Պետրոգրադում, Մոսկվայում, որտեղ և բանաստեղծը սովորում է Լազարյան ճեմարանում՝ գասախոսություններ ունկնդրելով Յուրևի համալսարանում: Վկայակոչվում են կենսադրական բազմապիսի տեղեկություններ. հիշարժան է ընկերների հետ առաջին բանաստեղծությունների ժողովածու հրատարակելը 1855-ին՝ Գամառ-Քաթիպա ծածկանունով, որ ուշագրություն է արժանանում Կարամզինից վերաքաղած՝ «Գրիր այնպես, ինչպես խոսում ես, և խոսիր այնպես, ինչպես դրում ես» բնաբանով: Ապա և ճանաչումը «Արաքսի արտասուքը» բանաստեղծությամբ, ցանկությունը թաղվելու էջմիածնում, որ իրագործվել է «Համեստ» կիսանդրիով:

Նկատենք, որ ժողովածուում Ռ. Պատկանյանը ներկայացված է տասը չափածո նմուշով՝ մեծ մասը Բրյուսովի թարգմանությամբ: Ըստ այդմ հետաքրքիր է և բանաստեղծի ստեղծագործության ամբողջական բնութագրերը: Այն է. «Պատկանյանի պոեզիայի նշանակությունը ոչ հայ ընթերցողը դժվար կարող է լիովին գնահատել: Դրա հիմնական ուժը բարձր հայրենասիրությունն է, հարազատ ժողովրդի հանդեպ ունեցած այն հրաշունչ ու անշահախնդիր սիրո մեջ է, որ երևան է դալիս ոչ միայն ներբողներով, այլև դառն երգիծանքներով... սերը չի կուրացնում նրան, նա տեսնում է հարազատ ժողովրդի մեղքերն ու խոցերը, բայց դրա հետ միասին գիտե, թե ինչու է սիրում նրան և ինչն է սիրում նրա մեջ: Այդ հայրենասիրությունը գործոն է, պարտավորեցնում է ոչ թե անդեմ հիացմունքների, այլ վճռական արարքների...»⁴⁷: Մի ուշագրավ, ուսանելի բնութագիր ևս, ըստ որի՝ «Պատկանյանի բանաստեղծություններն ամենից առաջ և ամենից ավելի ուսուցչի ձայնն են, որին այնքան կարիք ունեն հայ ժողովուրդն այն ժամանակ...»⁴⁸, — Բրյուսովի գրչով կախման կետերով առկախված տողեր, որոնք հուշում են սխալներից դասեր քաղելու անհրաժեշտություն: Անշուշտ, բարեկամական սրտացավությամբ...

Բրյուսովի տպավորությունը մարդկային ու ստեղծագործական խառնվածքով Շահազիզը Պատկանյանի հակապատկերն է: Բայց գործունեությունը ու պոեզիայով նա ևս առաջին հերթին ուսուցանող «ուսուցիչ» է: Լազարյան ճեմարան ավարտած Շահազիզը ողջ կյանքում նույն ճեմարանում դասավանդել է հայոց լեզու, գրել է հոդվածներ: Բնույթով հոետորիկ են և բանաստեղծությունները, որ սիրով արտասանել, երգել են դպրոցներում: Եվ հաստատելու համար հոետորականը, դիմում ու փաստարկներ է վերաքաղում քննադատ Մինաս Բերբերյանից: Ահա մի քանիսը. «Մ. Բերբերյանը խոսելով Շահազիզի հայրենասիրական բանաստեղծությունների մասին, որոնք անվանում են (են-ի փոխարեն է — Ան. Զ.)

⁴⁷ Նույն տեղում, էջ 114:

⁴⁸ Նույն տեղում, էջ 115:

«ոտանավորի ձև տրված ճառեր հայրենասիրության մասին», ավելացնում է. «Ճարտասանական շեշտը մի քիչ ջլատում է դրանց ուժը»: Շահագրգի սիրային բանաստեղծությունների մասին նույն քննադատն այսպես է արտահայտվում. «Որքան էլ ուժեղ լինի սերը՝ այնուամենայնիվ արտաքին հանդստությունը չի լքում բանաստեղծին. զգացմունքների վառ զեղումներ չեք գտնի նրա մոտ»⁴⁹ և այլն: Եվ սակայն, հինդ նմուշով (այդ թվում հատված «Լևոնի վիշտը» պոեմից) ամփոփելով բնութագրերը, այնուամենայնիվ ուսու բանաստեղծը «իրոք զմայլելի» է համարում «Երազը» (Թարգմ. Վ. Բրյուսով):

Այս ամփոփում է և պատմագրական ակնարկի, այսպես կոչված, «սկզբնավորողների» բաժինը, և, որ կարևոր է, այդ գործում արձանագրելով պոեզիայի «ուսուհայերի» դպրոցի պատմական դերն ու նշանակությունը: Թեկուզ նրանով, որ նույնն են Աբովյանի, Րաֆֆու, Աղայանի, ինչպես և Պատկանյանի, Շահագրգի, վերջիններիս հետևորդների վեպերի ու բանաստեղծությունների թեմաներն ու մոտիվները: Ուրեմն և հաստատելով այդ օրինակափոխությունը՝ ակնարկի վեցերորդ բաժինը Բրյուսովը շարունակում է դառնալով «սկզբնավորողներին» հաջորդած բանաստեղծների սերնդին, ահա՛ այսպիսի հայտով. «Սակայն հայ պոեզիայի մեջ ներդրված բոլոր հարստությունների բացահայտումը վիճակված էր միայն հաջորդ սերնդին՝ XIX դ. 60-ական թվականներին ծնված և հետևաբար 80-ական և 90-ական թվականներին գրական ասպարեզ իջած բանաստեղծներին: Բոլոր գրականությունների պատմության մեջ հայտնի են այնպիսի ժամանակաշրջաններ, երբ պոեզիայի համար հանկարծ գալիս է ծաղկման շրջան, ինչպես բալենու համար դարնան գալը: Այդպիսի շրջան էլ ապրեց «ուսուհայերի» պոեզիան»⁵⁰, և XIX դ. վերջերից միմյանց հաջորդում են Հովհաննիսյանը, Ծատուրյանը, Թումանյանը և Իսահակյանը:

Հովհաննիսյանի գեսլքում հիշատակվում է կրթությունը Մոսկվայի համալսարանում, ուսուերենի իմացությունը Թարգմանությունները ուսուական պոեզիայից. ուսուցչությունը էջմիածնի ճեմարանում, Թիֆլիսի հոգևոր դպրոցում, հրատարակած ժողովածուները, համաշխարհային գրականության իմացությունը գեղարվեստական բարձր ճաշակը, որով բազմապիսի առումներով գարձել է հայոց բանաստեղծության «նորագույն փուլի» առաջատարը: Այնքան որ՝ «Հովհաննիսյանն ասես նպատակ էր դրել՝ նշել լիրիկայի բոլոր ուղիները և տալ բոլոր նմուշները: Երգ, ներբող, եղերերգ, պատմական առասպելի մշակում, փիլիսոփայական խոհ քնարերգության այս բոլոր և մյուս հիմնական ձևերը սիրով ու մանրակրկիտորեն մշակել է Հովհաննիսյանը: Նա ավելի ուշադրությունը... վերաբերվել է նաև իր արվեստի տեխնիկային... Հովհաննիսյանի պոեզիայի ակնառու առանձնահատկությունը նրա մոտիկությունն է ժողովրդական երգին»⁵¹, և թվարկվում են Վահագնի ծնունդը, Արտավազդի լեգենդը⁵², ժողովրդա-

⁴⁹ Նույն տեղում, էջ 117:

⁵⁰ Նույն տեղում, էջ 118:

⁵¹ Նույն տեղում, էջ 119-120:

⁵² Բնագրում սխալ է՝ «легенду о царе Арташесе» («Поэзия Армении...», с. 81).

Վրիպումն ուղղված է նաև ժողովածուի 1966, 1973-ի հրատարակություններում և ո՛չ էլ հայերեն թարգմանություններին մեջ:

կան «Արագն եկավ ...» երգը և այլն: Եվ հետևում է եզրակացությունը. «Սա, իհարկե, գերագույն պարգևներից մեկն է, որ կարող է երազել պոետը: Այս իմաստով Հովհաննիսյանը ճշմարտապես ազգային բանաստեղծ է: Ի միջի այլոց նրա պոեզիայի ու ժողովրդականի կապը բնորոշ է ընդհանրապես «ռուսահայերի» ամբողջ նոր դպրոցի համար»: Ապա և նույն ոգով էլ եզրափակում է. «Ժողովրդական պոեզիայի հետ նույնպիսի մոտիկութունն ենք գտնում Թումանյանի ու Իսահակյանի ստեղծագործությունների մեջ»⁵³:

Ցավոք, մեր օրերի գրականության պատմաբանները երբեմն Հովհ. Հովհաննիսյանի ստեղծագործությամբ նշանավորվող անցումային տյոզ օղտկր ըստ հարկի չեն կարևորում: Մինչդեռ դա իր ժամանակի գրական միջավայրում ճանաչված-օրինական գնահատական էր, որը և հավաստում է Բրյուսովը:

Չմոռանանք նաև, որ Բաքվում, 1916-ի հիշարժան օրերին, Բրյուսովը հանգիստը մեծ է ունեցել Հովհ. Հովհաննիսյանի հետ: Եվ դա էլ նշանակում է, թե բնութագրի հետևում գործ ունենք նաև կենդանի տպավորությունների հետ, որպիսիք առավել դրսևորումով տեսնում ենք հաջորդ թումանյանի դիմապատկերում. «Հովհաննիսյանի համեմատությամբ ավելի կրքոտ, ավելի անմիջական»: Ինչ խոսք, այցելությունը Թիֆլիս եղել էր ավելի տևական, Թումանյանի հյուրընկալ օջախում ավելի հետաքրքիր ու բազմազան, և Բրյուսովի տպավորություններն արդյունքում արդեն ձևակերպվում են ահա այսպես. «...չատ կողմերից ինքնուս, հսկայական, բայց ոչ սխտեմատիկ ընթերցանության տեր, հայ հնաշխարհի սիրահարված և ժողովրդական կենցաղակերպին հոգով մոտիկ», որի մեջ զարմանալիորեն միահյուսվում են «երկու նախասկիզբ՝ քեֆն ու հանճարը»: Իսկ հիմա արդեն՝ նոր ժամանակների պոեզիայի «նահապետ», կենսագրական, վարք ու խառնվածքի տեր մեկը, որ թվում է, թե «ողջ Թիֆլիսում չկա մի մարդ, որը չճանաչի բանաստեղծի բնորոշ, ալեհեր գլուխը ու չսիրի նրան որպես ազնիվ մարդու ու սքանչելի գրողի»⁵⁴:

Ապա բնութագրում է թումանյանական բոլոր ժանրերը. «Անուշի» օրինակով պոետները ժողովրդական կյանքի գունեղ նկարագրություններով, բալլադը, բանաստեղծությունը՝ ամենուրեք հնչյունադրության և ռիթմի «հազվագյուտ» բնատուր զգացողությամբ ու արվեստով, հեքիաթները՝ մանուկների համար դրավիչ սրամտությամբ, այնուհետև թարգմանությունները Պուշկինից, որոնցում էլ զարմանալի խորաթափանցությունը բնադրի ոգուն, թարգմանական երկի բուն էությունը կուսահելու ընդունակությունը»⁵⁵: Արձանագրում է Բրյուսովը և անմիջապես անցնում տարիքով Հովհաննիսյանից 10, Թումանյանից 6 տարի երիտասարդ Իսահակյանին: Դարձյալ կենսագրական հղումներով. էջմիածնի ճեմարանը ավարտած՝ աշխատանք Վիեննայի թանգարանում, միաժամանակ ազատ ունկնդիր Լայպցիգի համալսարանում: Այնուհետև հաճախակի այցելություններ արտասահման: Եվրոպական գրական շրջանների հետ մեր-

⁵³ Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 120:

⁵⁴ Նույն տեղում, էջ 121:

⁵⁵ Նույն տեղում, էջ 122:

ձավոր շփումների արդյունքում բարերար ազդեցություն՝ գրական ոգը մթնոլորտը նվաճած «սիմվոլիստական շարժման», որը, սակայն, նրա ստեղծագործության մեջ դրսևորվել է աշխարհայացքային առումով և ոչ որպես գրական ծրագիր: Ինչ մնում է բանաստեղծական խառնվածքին, որքան Հովհաննիսյանի պոեզիան լուրջ-հանդարտ է, Թումանյանի ստեղծագործությունը՝ կրքոտ-զվարթ, այնքան Իսահակյանի բանաստեղծությունները՝ «տառապալի-անհանգիստ են և պոռթկուն»: Ապա դառնալով ստեղծագործությանը, Բրյուսովն այն բաժանում է երկու խմբի. կատարյալ վարպետությանը ստեղծված ժողովրդական քնարերգության հանգի բանաստեղծություններ: Իսկ երկրորդն՝ ահա՛. «Իսահակյանի ստեղծագործության մյուս կեսը կազմում են նրա խոհական բանաստեղծությունները և «Աբու-լալա-Մահարի» մեծ պոեմը, որոնց մեջ առանձնակի ակներևություններ արտահայտվում է գրականության սիմվոլիկ շրջանի ազդեցությունը»⁵⁶: Եվ շարունակում է բացատրություն-գնահատությունը, այսինքն՝ խորհրդապաշտական արվեստի բնույթը. «Իսահակյանն այդտեղ հանդես է գալիս որպես եվրոպական բանաստեղծներից մեկը՝ առաջադրելով նույն կամ նման խնդիրներ, որոնք լուծել են ջանում և այլ ժողովուրդների՝ ֆրանսիական, գերմանական, ռուս լիրիկները... Այդ բանաստեղծություններից էլ կարելի է դատել, թե ինչպիսի՛ խոշոր վարպետ ունի հայ գրականությունը հանձին Ավետիք Իսահակյանի: Ի միջի այլոց այնուամենայնիվ բնորոշ է, որ նրա հիմնական պոեմի հերոսը մի արաբ բանաստեղծ է և ամբողջ պոեմն էլ հագեցած է Ասիայի պերճագեղություններ ու գրգանքով: Արևելքի տարրերը այստեղ էլ իրենց հաղթանակն են տոնում «ռուսահայերի» դպրոցի ներկայացուցչի կերտվածքում, ինչպես որ Արևմուտքի տարրերը ամենուրեք գերիշխում են «տաճկահայերի» դպրոցի ներկայացուցչի ստեղծագործության մեջ»⁵⁷:

Ինչպես տեսնում ենք, Իսահակյանի արվեստի Բրյուսովի սահմանումն ու գնահատականը բացահայտորեն արձագանքում են Ա. Բլոկի վերը բերված հայտնի գնահատությունը՝ խտացված տողերով: Իսկ ահա, Բրյուսովի գեպքում նաև գումարվում է զգուշավորություն, որքանով «արաբ» բանաստեղծի ցասումը-ծառանալն ուղղված է առհասարակ մարգարային արատավոր-անարդար հասարակության դեմ:

Միաժամանակ հետևում է մի այլ բացատրություն: Ըստ երևույթին՝ 23-10 հարաբերությամբ զգալով թվաքանակով մեծ տարբերություն ժողովածուում տեղ գտած Իսահակյանի և Թումանյանի գործերի միջև՝ նրբանկատորեն արդարանում-հաշվարկում է էջերով և, իրավամբ, գերակշռող է նկատվում Թումանյանը՝ «Անուշ» պոեմով, «Մի կաթիլ մեղրով» և մյուսներով:

Պատմագրական ակնարկում ներկայացված Ծատուրյանը համառոտ բնութագրով հաջորդում է Իսահակյանին (պատմականության ընթացքի որոշ խախտումով), և հասարակական հարցերից սովորաբար խուսափող,

⁵⁶ Նույն տեղում, էջ 123:

⁵⁷ Նույն տեղում: Ի դեպ, վերջին երկու նախադասությունն այստեղ թարգմանված չէ. գրանց թարգմանությունը տվել ենք ըստ «Սովետական գրականություն և արվեստ» հանդեսի (1945, № 1-2, էջ 83-84):

դրանք չըջանցող Բրյուսովը Ծատուրյանի մասին գրում է. «Դաստիարակված լինելով կյանքի ծանր դպրոցում, իր ուղին անձամբ հարթած Ծատուրյանը ավելի սերտորեն կապեց իր պոեզիան հասարակական հարցերին, որոնց նվիրեց իր ... բանաստեղծությունների զգալի մասը»⁵⁸: Իսկ այդ բախտը, իհարկե, ունեցել են նորդարյան հայ բոլոր գրողները: Նշենք, որ ակնարկում մոռացված չէ և Ծատուրյանի թարգմանչական գործունեությունը. ծանրակշիռ թվով թարգմանություններ է կատարել ռուս և եվրոպական մեծ մասամբ բանաստեղծներին:

Առավել «երևելի» բանաստեղծների կողքին չեն մոռացվել և մյուսները. Թումանյանի «գպրոցին» պատկանող Դ. Դեմիրճյանը ժողովածուում ներկայացված է հատվածով «Լենկ-Թեմուր» պատմական «սքանչելի» պոեմից, հիշատակվում է նաև նույն դպրոցին պատկանող Վ. Միրաքյանը՝ «Լալվարի որսը» «հետաքրքրական» պոեմով: Ապա, «մի կողմ թողնելով» մյուսներին, Բրյուսովն առանձնացնում է Շ. Կուրդինյանին՝ գրելով. «Իսահակյանի ոգով գրած առաջին փորձերից հետո դիմեց ուղղափառ մարքսիզմի ոգով համակված իդեական պոեզիային: Այս տեսակետից Կուրդինյանը բնորոշ երևույթ է հայ պոեզիայում: Կուրդինյանի բանաստեղծություններում կա ոգեշնչում, և մեր ժողովածուի մեջ ներկայացված է նրա պոեզիան»⁵⁹: Գրում է՝ օբյեկտիվորեն հիշատակելով «նույն ուղին» նախընտրած Հակոբ Հակոբյանին:

Այսպիսով, ավարտելով նոր ժամանակների արևելահայ բանաստեղծությունների գիմնատեղերը, պատմագրական ակնարկի հեղինակ Բրյուսովը՝ հայոց եղբունի ողբերգական ծանր օրերին դառնում է արևմտահայ բանաստեղծությանը: Եվ առաջին իսկ հատվածից շեշտադրում է առնչությունը արևմտաեվրոպական ի մասնավորի ֆրանսիական «պառնասյան դպրոցի» հետ: Ուրեմն և ներկայացնում է «դպրոցի» բնույթն ու էությունը: Այն է՝ «դպրոցը» ամենից առաջ պահանջում է «...ձևի անբասիրություն և պոետի հրաժարումն իր անձնավորությունից՝ բանաստեղծը չպիտի երևար իր ստեղծած պատկերների տակից: «Պառնասյան» ուղղությունը, այն բոլոր գրականություններում, որոնք ընդունում էին դա, միշտ էլ տանում էր դեպի ստեղծագործության որոշ սառնություն, բայց փոխարենը նպաստում էր պլաստիկայի զարգացմանը պոեզիայում և դերադույն կատարելության էր հասցնում չափածոյի տեխնիկան»⁶⁰: Ըստ այդմ, հայ բանաստեղծների դեպքում փրկարար տարր է դիտվում հայրենիքի սերը, որ ջերմացնում ու կենդանություն է հաղորդում նրանց «պառնասյան» կառույցներին: Համանման փաստարկներով, ի վերջո, Բրյուսովը դառնում է, որ, հետևելով «պառնասյան» հանգանակների, արևմտահայ բանաստեղծները, իհարկե, հայ դրականությունը տվել են արժեքավոր ու գեղեցիկ բազմաթիվ նմուշներ: Բայց դրանց «...այդ (այդպիսի – Ան. Զ.) հրապույրն անհետանում է այլ ազգություն պատկանող ընթերցողի համար, որը կարող է ծանոթանալ այդ գեղեցկությունը... իր պոետների բանաստեղ-

⁵⁸ Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 124:

⁵⁹ Նույն տեղում, էջ 126: Ի դեպ, վերջին երկու նախադասությունն այստեղ թարգմանված չէ. դրանց թարգմանությունը տվել ենք ըստ «Սովետական գրականություն և արվեստ» հանդեսի (1945, № 1-2, էջ 85):

⁶⁰ Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 126-127:

ծուծությունները... մեջ...» և, այնուհետև, «Մասնավորապես ուսուցիչները և՛ այն «հավերժական» թեմաները... և՛ ձևի այն «անբասիր» գեղեցկությունը, որին հասնում է նա (արևմտահայ պոետիան - Ան. Զ.) իր լավագույն գործերում՝ գիտե թե՛ ուսուցիչների բանաստեղծություններից, թե՛ ֆրանսիական պոետականների ստեղծագործություններից: Ահա թե ինչու մեր ժողովածուի մեջ «տաճկահայերի» պոետիային ավելի քիչ տեղ է հատկացված, քան «ուսահայերինը», թեև մենք բարձր ենք գնահատում արևմտահայ պոետների առանձին գործերը»⁶¹, - դրում է ակնարկի հեղինակը:

Թե՛ փաստարկներով և թե՛ բացատրական էքսկուրսով վիճելի հիմնավորում, որ կարելի է ներկայացնել առհասարակ բոլոր ժողովուրդների գրականության սեփականի և այլ ժողովուրդի առնչակցություն - հարաբերություն քննարկելիս:

Այնուհետև նույն ուղղությունում ծավալվելով՝ Բրյուսովը գտնում է նաև, որ համապատասխան հաջորդներ չեն ունեցել և Պեշիկթաշլյանն ու Դուրյանը, և որովհետև ինքը ծանոթ չէ Տեմիրճիպաշյանի գործունեությանն ու պոետիային, համենայն դեպս, կարող է ասել, որ Հովհաննիսյան, Մատուրյան, Թումանյան, Իսահակյան սերնդի դիմաց անհամեմատ թույլ է արևմտահայ Սիպիլ, Շանթ, Չոպանյան, Մալեգյան, Թեքեյան սերունդը: Եվ շարունակելով լրացնում է. «... նրանցից ավելի երիտասարդ, սակայն իր պոետիայի բնույթով նրանց է հարում Մեծարենցը: Բայց այս բանաստեղծների շարքից ոչ մեկը չստեղծեց իր ամբողջական «աշխարհը», որը բացվում է, օրինակ, Թումանյանի ստեղծագործության մեջ: Սրանք բոլորն էլ բացառապես քնարերգակ են և խուսափում են խիստ ընդարձակ մտահղացումներից ու համապարփակ խնդիրներից»⁶²: Նշված սերնդի կազմում հենց միայն մեծատաղանգ Շանթի ներկայությունը կարելի է թեական համարել Բրյուսովի սահմանումը: Բայց, ահա՛, նա անմիջապես շարադրանքը շարունակում է Շանթով՝ նրան արժևորելով որպես փիլիսոփա-լիրիկ՝ ժողովածուում գետեղված երկու չափածոների («Գիշերապահ» և «Փիլիսոփաներ»): Թարգմ. Ս. Շերվինսկի) տպավորություն: Միաժամանակ թուրքիկ դիտարկումով, ըստ որի Շանթի պոետիան հիանալի է ձևի և բովանդակության կատարյալ ներդաշնակությամբ: Եվ սակայն նորից խմբագրելիս տողատակով հիմնավորապես վերանայում է դա, նշելով, որ Շանթը ավելի դրամատուրգ է, քան քնարերգակ, և ապա ըստ արժանավուն շարունակում. «...նրա զբաղմունքը, որոնցից մեկը՝ «Հին աստվածները», որ թարգմանված է ուսերեն, ճշմարիտ իրադարձություն էր հայ գրականության մեջ. ասենք մի (ցանկացած - Ան. Զ.) գրականության մեջ էլ պատվավոր տեղ կգրավեր ... ընդհանուր մտահղացման հետաքրքրականություն և բնութագրումների խորությունը. մյուսը՝ «Կայսրը», նույնպես ուժեղ տպավորություն գործեց առաջին անգամ բեմ բարձրանալիս (1916): Սակայն իբրև բանաստեղծ Շանթը ընտրեց փիլիսոփայական խորհրդածությունների հեղինակի սահմանափակ ասպարեզը: Այս սեռի

⁶¹ «Սովետական գրականություն և արվեստ», 1945, №1-2, էջ 85: Մեջբերված հատվածը թարգմանված է Կ. Բրյուսովի նշված ժողովածուում:

⁶² Վ. Բրյուսով. Նշվ. ժող., էջ 127-128:

մեջ Շանթն ստեղծեց խորապես մտածված, նրբաճաշակությամբ գրված մի շարք հրաշալի բանաստեղծություններ: Շանթի պոեզիայի առանձնակի հրապուլյրի արմատը ձևի ու բովանդակության կատարյալ ներդաշնակությունն է»⁶³ և այլն:

Նկատենք. «Հայաստանի պոեզիա»-ի հրատարակության միջոցին Շանթը գտնվում էր արտասահմանում: «Կայսրի» բեմադրության համար վերադարձավ Թիֆլիս. դժբախտաբար, բեմադրությունը արժանի ընդունելություն չարժանացավ: Ավելին. ոչ միայն հայ, այլև ցանկացած ժողովրդի գրականության համար պատվաբեր, մեծատաղանդ Շանթի թատրերգությունները՝ ինչպես «Հին աստվածներն» ու «Կայսրը», այնպես էլ «Շղթայվածը», «Ինկած բերդի իշխանուհին», «Օչին Պայլը» առ այսօր չեն արժանացել անգամ իսկ միջին կարգի գնահատության, ասել է բեմադրության:

Շանթին հաջորդում է, ժողովածուում՝ նախորդում, Սիպիլը, որը, ըստ Բրյուսովի, իր գործերով չի գիջում ժամանակի Ֆրանսիական պոեզիայի լավագույն ստեղծագործություններին, և ապա՝ տիկին Սիպիլի չափածոն ունի ինչ-որ ինքնօրինակ կանացիություն, որպիսին հազվագեպ է հանդիպում հայ պոեզիայում:

Մալեզյանի պոեզիայում էլ «սրտագեղություն» կա. այսքանը: Իսկ ահա հաջորդ տողով՝ կա «...և մեծ վարպետություն՝ Միսաք Մեծարենցի (ծն. 1885 թ.) բանաստեղծություններում: Բայց Մեծարենցը վաղաժամ մեռավ ու չկարողացավ զարգացնել իր սքանչելի շնորհքը»: «Զևի վարպետությամբ» արևմտահայ դպրոցին «հարազատանում է» և Վահան Թեքեյանը: Վերոթվարկյալ բանաստեղծների գործերից ստացած տպավորությամբ Բրյուսովն արձանագրում է. «Մեր ժողովածուի մեջ Վահան Թեքեյանի պոեզիան ներկայացված է մի շարք թարգմանություններով, ինչպես և տրված են նմուշներ տիկ. Սիպիլի (բաց է թողնված Շանթի անունը — Ան. Զ.), Մալեզյանի և Մեծարենցի պոեզիայից: Այս պոետների բանաստեղծությունները իրենց պրիոմներով նման լինելով Ֆրանսիական պոետների ստեղծագործության՝ համեմատաբար հեշտ են թարգմանվում, բայց հազիվ թե այդ թարգմանությունների թիվն ավելացնելը համապատասխաներ մեր գրքի նշանակման (նպատակին — Ան. Զ.)»⁶⁴:

Իրոք. ինչպես Շանթի, այնպես էլ Մեծարենցի ցանկացած ժողովրդի գրականությանը պատիվ բերող երևույթների դեպքում, և առհասարակ՝ Բրյուսովը շատ է չափազանցնում ազդեցությունը Ֆրանսիական բանաստեղծներից... Սակայն չվիճարկենք, մանավանդ անմիջական հաջորդը Արշակ Չոպանյանն է, որին Բրյուսովը ներկայացնում է արժանավայել հարգանքով, ահա, այսպիսի տողերով. «Այս անխոնջ գործիչն ու բեղմնավոր գրողը հայրենի գրականությանը անգին ծառայություն է մատուցել»: Եվ թվարկում է անգնահատելի ծառայությունները հարազատ ժողովրդին ու գրականությանը. հրատարակել է մոռացված գրողների գործեր, Ֆրանսե-

⁶³ Նույն տեղում, էջ 128: «Սովետական գրականություն և արվեստ» հանդեսում տպագրված թարգմանության մեջ, գաղափարական ու քաղաքական հայտնի նկատառումներով, տեղ չեն գտել Լևոն Շանթի ոչ անունը, ոչ էլ նրան վերաբերող Վ. Բրյուսովի խոսքերը:

⁶⁴ «Սովետական գրականություն և արվեստ», 1945, № 1-2, էջ 86: Մեջբերված հատվածը թարգմանված չէ Վ. Բրյուսովի նշված ժողովածուում:

րեն թարգմանությունները ժողովրդական երգերի ու միջնադարյան քնարերգության ընտրանի, Փարիզում իր խմբագրությունները հրատարակել է Հայերեն ամսագիր, եվրոպական ընթերցողին ու հանրությանը գասախոսություններով ծանոթացրել է Հայ գրականությանն ու մշակույթին: Ապա, դառնալով պոեզիային, գրում է. «Չոպանյանի բանաստեղծություններն ավելի շուտ ֆրանսիական պոետների, մասնավորապես Բողլերի ու Վեռլենի պոեզիայի կրկներգն են, բայց աշխույժ ու տաղանդավոր»⁶⁵:

Ամփոփելով, Վ. Բրյուսովը նշում է, որ թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ դպրոցները, անկախ առանձին բանաստեղծների տաղանդի չափից, XIX դ. կատարել են իրենց առաքելությունը: Տեսական այսպիսի ընդհանրացումով, ըստ որի արևելահայ դպրոցը «շարունակել ու զարգացրել է Հայ հին գրականության տրագիգիաները և սերտ կապ պահել ժողովրդական պոեզիայի ու կյանքի հետ: Երկրորդը (արևմտահայ դպրոցը – Ան. Զ.) կատարելագործել է տեխնիկան և Հայ գրականության մեջ մտցրել արևմտյան գրականությունների դադափարներն ու սկզբունքները՝ յուրացնելով նրանց նոր նվաճումները»⁶⁶:

Տեսական այդ սահմանումը՝ այլ առումով կամ շեշտադրումով Բրյուսովը կրկնում է և պատմագրական ակնարկի հերթական յոթերորդ բաժնում, որ սկսվում է սույն նախադասությամբ. «Ռուսահայաստանի» երիտասարդ բանաստեղծներից ամենաակնավոր գործիչը պետք է ընդունենք Վահան Տերյանին»⁶⁷: Հաջորդ նախադասությամբ հիշատակվում է վերջինիս առաջին ժողովածուի, այսինքն՝ «Մթնշաղի անուրջներին» հրատարակությունը⁶⁸, որով արգեն իսկ ճանաչվել է որպես «աներկբա մեծություն», թեև եղել են և տարակարծություններ: Ապա Տերյանը դիտարկվում է որպես «սիմվոլիստների աշակերտ», որ փորձում է յուրացնել եվրոպական պոեզիայից (հատկապես ռուս և ֆրանսիական) այն ամենը, ինչ վրիպել է Հայ բանաստեղծների տեսադաշտից. այն է՝ առավելագույն հոգացողություն ու իթմի և հանգ-հանգավորման առումով: Կարևորվում են և բարձրակարգ թարգմանությունները ռուս և ֆրանսիական նորագույն պոետներից: Եվ սակայն Բրյուսովի կարծիքով Տերյանը էությունով և աշխարհատեսությամբ հարադատ է «ռուսահայ» բանաստեղծության բուն ուղղությանը: Ըստ այդմ էլ ընտրված են ժողովածուում զետեղված բանաստեղծությունները՝ թվով տասը, մեծ մասամբ Բրյուսովի թարգմանությամբ:

Հակիրճ տողեր են հատկացված և Տերյանի «գործի» շարունակողներին՝ Տեր-Մարտիրոսյանին ու Լեյլիին, որին հաջորգում է տողատակի անհրաժեշտություն. ուրեմն տե՛ս տողատակում⁶⁹:

⁶⁵ Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 130:

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Բնագրում «Մթնշաղի անուրջներին» հրատարակման թվական է նշված 1905-ը. ճշգրիտը 1908-ն է: Վրիպումն ուղղված է նաև ժողովածուի 1966, 1973-ի հրատարակություններում և ոչ էլ Հայերեն թարգմանությունների մեջ:

⁶⁹ «Կարելի է հիշել նաև Կոստան Զարյանի անունը, որ ուղադրություն գրավեց պատերազմի օրերին Հայաստանի մասին գրած իր բանաստեղծություններով, որոնք սկզբում լույս տեսան իտալերեն թարգմանությամբ» (Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 131):

Ուստի այդ կետից էլ Բրյուսովը կրկնում է վերը սահմանած օրինաչափությունը՝ որոշակի հակառակ ծայրից. ըստ որի, եթե տերյանական գայրոցը հետևորդներով ձգտում է բանաստեղծական «խստագույն տեխնիկայի», ապա արևմտահայ բանաստեղծներն էլ հետամուտ են լայնահայաց, խորը «բովանդակության»: Գրում է և «առանձնապես նկատելի» առումով՝ վկայակոչում Դանիել Վարուժանին ու Սիամանթոյին: Հասկանալի է, բնականաբար, նույնատիպ քերթվածներ էլ պետք է, որ ընտրված ու տեղադրված լինեն ժողովածուում: Դրանք հանրածանոթ բանաստեղծություններ են, որոնց ճշգրիտ քննությունը ու մեկնաբանությունը Բրյուսովը շեշտադրում է թե՛ Վարուժանի և թե՛ Սիամանթոյի որպես սիմվոլիստների անհերքելի առնչակցությունն – ձայնակցությունը էմիլ Վերհարնին, Վերհարնի «հզոր տաղանդին», որի ուժով՝ հեռանալով «սիմվոլիստների» սահմանափակվելու դայթակղությունից, նրանց ստեղծագործությունը կտրուկ իջնում է կյանք, կյանքի հորձանուտ, ապրում կյանքով: Ապա և որպես առնչակցության հիմնավոր փաստարկ՝ արձանագրում է. «Եվ Վարուժանի, և՛ Սիամանթոյի բանաստեղծությունների ձևում, նրանց պոեմների անհավասարաչափ տողերում զգացվում է ֆրանսիական «վեռլիբրիստների» նույն Վերհարնի, Վիելե Գրիֆինի և այլոց ազդեցությունը»⁷⁰:

Եվ սակայն մեկնությունն ընդհատվում է «մեծ պատերազմի» սկզբների «երիտասարդ գրողների» կորստյան բոթով (թեև տակավին կասկածելի), և հաջորդում են ի խորոց սրտի անկեղծ ցավով շարադրված տողեր՝ այս եզրակացությունը. «Համենայն դեպս այն էլ, ինչ արդեն արել են Վարուժանն ու Սիամանթոն, բավական է ապահովելու նրանց տեղը հայ գրականության (բաց է թողնված պատմություն բառը – Ան. Զ.) մեջ և պարզաբանելու նրանց պոեզիայի ընդհանուր սլացքը»⁷¹: Այս պարբերության մի հատված Վ. Բրյուսովը նոր խմբագրությամբ տողատակին տվել է ճշգրտված շարադրանքով, երբ արդեն հայանի էր դաժան իրողությունը: Եվ քանի որ այդ տողերն առաջիններից են, որոնցով ի դեմս Վարուժանի և Սիամանթոյի հայոց գրականության ու պատմության էջերում արձանագրվել է հայ ժողովրդի հրեշավոր ցեղասպանությունը, մեջբերենք դրանք. «Առանձնապես նկատելի է (ձայնակցելը եվրոպական պոեզիային – Ան. Զ.) Դանիել Վարուժանի և Սիամանթոյի (կեղծանունը Ատոմ Յարջանյանի) բանաստեղծություններում, երկու պոետ, որոնց մեծ պատերազմը խլեց հայ գրականությունից նրանց ուժերի ծաղկման հասակում, քանի որ թուրքերը սպանել են երկուսին էլ հայկական մասսայական ջարդերի օրերին... Վարուժանի և Սիամանթոյի հետ գերեզման իջան երիտասարդ պոեզիայի լավագույն հույսերը, բայց այն, ինչ կարողացան անել նրանք իրենց կարճատև կյանքում, բավական է ապահովելու նրանց տեղը հայ գրականության (բաց է թողնված պատմություն բառը – Ան. Զ.) մեջ և պարզաբանելու նրանց պոեզիայի ընդհանուր սլացքը»⁷²: Ըձգրիտ դիտարկում, քանի որ հենց այդպես էլ նրանք շարունակում են ուղեկցել հայ

⁷⁰ Նույն տեղում, էջ 132:

⁷¹ «Սովետական գրականություն և արվեստ», 1945, №1-2, էջ 87:

⁷² Վ. Բրյուսով. նշվ. ժող., էջ 132:

գրականությանն ու հարազատ ժողովրդի պատմությանը, ներկայանալ եվրոպական, ռուս և այլ ժողովուրդներին:

* * *

Եվ այսպես, իր ժամանակի մոսկովյան հայկական կոմիտեի ազգանվեր ջանքերով՝ Վալերի Բրյուսովի անկեղծ նվիրումով ըստ ամենայնի խնամքով հրատարակության պատրաստված «Հայաստանի պոեզիա» ժողովածուն յուրօրինակ հուշակոթող է հայոց ցեղասպանության հիշատակին: Պատմական այդ ողբերգական ահեղ օրերին այն կոչված էր հայոց բանաստեղծությունը՝ իր հնադարյան ու նորգարյան բնույթով, ավելի լայն՝ գրականությունը, մշակույթը և պատմությունը ծանոթացնել ռուս առաջավոր հանրությունը: Ըստ այդմ հիշեցնենք, որ նույն օրերին դարձյալ Հայկական կոմիտեի հրատարակությամբ տպագրվում է և Վ. Բրյուսովի «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (Մոսկվա, 1916) գրքույկը՝ որպես լրացում կամ հավելված «Հայաստանի պոեզիա»-ին:

Ժողովածուի պատմական առաքելության ու նշանակության մասին մեր խոսքն ամփոփենք Պ. Սևակի գնահատությամբ՝ «Շնորհակալիքն ասենք մինչև վերջ» վերնագրով հոդվածից հետևյալ քաղվածքով. «Հայաստանի պոեզիա»-ն, որ լույս տեսավ 1916-ին, մի սոսկական հատոր չէր, մեծադիր ու շքեղակազմ: Դա մեր ազնվության վկայականն էր՝ պարզված աշխարհի արյունուռտ դեմքին, անձնադիրը մի ժողովրդի, որ ապրելու իրավունքը ձեռք էր բերել ոչ միայն մի դարավոր մաքառումով, այլև իր հոգևոր այն պաշարով, որ ներմուծել էր համաշխարհային քաղաքակրթության և մշակույթի մթերանոցը: Բրյուսովյան «Հայաստանի պոեզիա»-ն համաշխարհային առաջին պատերազմի թոհուրհուհի մեջ պայթեց իբրև ռուսների խուրձ:...

Տարվելով հայոց քերթությամբ և ընդհանրապես հայոց պատմությամբ՝ Բրյուսովը թարգմանչի և խմբագրի իր սովորական դերից վերաճեց այնքան, որ դարձավ մեր դարավոր մշակույթի վերամկրտության կնքահայրը: Մեր բանաստեղծության համար արեց թերևս փոքր-ինչ ավելին, քան Ստրիժկովսկին (Ստրիժկովսկի – Ա.Ն. Չ.)՝ մեր ճարտարասլետության, Մառը՝ մեր հնագիտության համար»⁷³:

СБОРНИК В. БРЮСОВА "ПОЭЗИЯ АРМЕНИИ".
КРИТИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

АНУШАВАН ЗАКАРЯН

Р е з ю м е

Летом 1916 г. в Москве, под редакцией Валерия Брюсова, вышел в свет сборник "Поэзия Армении". Инициатором издания был Московский Армян-

⁷³ Պ. Սևակի Երկերի ժողովածու 6 հատորով. հ. 5, Երևան, 1974, էջ 238–239:

ский комитет в лице литературно-культурных деятелей К. Микаэляна, П. Макинцяна, В. Терьяна, К. Кусикьяна и А. Цатуряна. Переводчиками были известные русские поэты В. Брюсов, А. Блок, И. Бунин, Ф. Сологуб, К. Бальмонт и другие. Сборник явился своеобразным памятником геноциду армян – в трагические, жестокие дни истории он призван был ознакомить русскую передовую общественность с армянской поэзией, многовековой и новой, а шире – с литературой, культурой и историей армянского народа.

V.BRYUSOV'S COLLECTION "POETRY OF ARMENIA".
CRITICAL NOTES

ANUSHAVAN ZAKARYAN

S u m m a r y

In the summer of 1916 the collection "Poetry of Armenia" was published in Moscow, under the editorship of Valery Bryusov. The initiator of the edition was the Moscow Armenian Committee: literary-cultural figures K. Mikayelyan, P.Makintsyian, V.Teryan, K.Kusikyan and A.Tsaturyan. The translators were well-known Russian poets: V. Bryusov, A. Blok, I. Bunin, F. Sologub, K. Balmont and others. The collection was a kind of monument to the Armenian Genocide: in the tragic, hard days of the history he was called to acquaint the Russian progressive society with the Armenian poetry – ancient and new, and wider – with the literature, culture and history of the Armenian people.